

ԱԶՏԱԿ

ՕՐԱԹԵՐԹ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE

أزதாக جريدة يومية، سياسية وأدبية - الميزة للمسؤولية، إيثا آدرويشيان

1500 Լ.Ո. 74ԲԳ ՏԱՐԻ, ԹԻԻ 204 (20960) ՀԻՆԳՇԱՐԹԻ, 8 ՆՈՅԵՄԲԵՐ 2001 10 ԷՋ

ԼԻԲԱՆԱՆ ԿԸ ՄԵՐԺԷ ԱՅԱՐԵԿՉՈՒԹԵԱՆ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՆՈՐ ԱՆՈՒԱՆԱՅԱՆԿԸ

ՅԱՅՏԱՐԱՐԵՑ Ն. ՊԵՐՐԻԻ



Ամերիկայի դեսպանը այցելեց Ն. Պերրիի:

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պերրի երեկ ընդունեց Լիբանանի մեջ Միացեալ Նահանգներու դեսպան Վինսընթ Պէթըլի այցելութիւնը, ապա յայտարարեց, որ լիբանանեան դիմադրութեան ու պաղեստինեան ինթիֆատային առնչութեամբ հակոտնեայ կեցուածքներ արտայայտուած են:

«Միացեալ Նահանգներ քացայայտօրէն որդեգրած են Իսրայէլի կեցուածքը, ուստի ամերիկացի դեսպանին ըսի, որ ասիկա Իսրայէլի կողմնակալ կեցուածք է եւ ոչ մէկ առնչութիւն ունի ձեր ահաբեկչութեան դէմ պատերազմ կոչած արշաւին հետ: Նուապագոյնը, որ կարելի է ըսել դիմադրութեան եւ ինթիֆատային ընդդիմացող այս կեցուածքին մասին այն է, որ անիկա արարներուն դէմ եւ ահաբեկչութեան թափ տալու կեցուածք», յայտարարեց ան:

Պերրիի աւելցուց. «Իսկ երբ դեսպանը մերժեց այս մեկնաբանութիւնը, անկէ քացատրութիւն պահանջեցի, թէ ինչպէս արարներուն եւ իսլամներուն պէտք ունեցող Միացեալ Նահանգներու նախագահը կրնայ խուսափիլ Եսսէր Արաֆաթի հետ տեսակցելէ, այն պահուն, երբ

Ծար.ը՝ էջ 10

ԹՈՒՐԵԻԱ

ՏԵՐՎԻՇ ԿԸ ՅՈՒՍԱՅ ՓՈԽԱՏՈՒՈՒԹԻՒՆ ՁԵՌՔ ՁԳԵԼ Դ. Մ. ՖՈՆՏԷՆ

Թուրքիոյ տնտեսական նախարար Քեմալ Տերվիշ երէկ յայտնած է, թէ ինքնավստահ է, որ Թուրքիա Դրամական Միջազգային Ֆոնտէն փոխատուութիւն պիտի ապահովէ 2002ի համար:

Ան կը խօսէր Անգարայի մէջ Թուրքեւմաներիկեան առեւտրական խորհուրդի մէկ ժողովին:

Ան խոստովանած է, թէ դժուարին բանակցութիւններու մէջ է Դ. Մ. Ֆոնտէն պատուիրակութեան հետ, որ Անգարա հասած է Կիրակի օր եւ կ'ակնկալէի, որ շուրջ 2 շաբաթ մնայ Թուրքիա:

Դէտեր կ'ըսեն, թէ Թուրքիա եւ Դրամական Ֆոնտը կը յուսան համաձայնութիւն մը գոյացնել Դ. Մ. Ֆոնտին, Համաշխարհային Դրամատան եւ «Ճի - 20»-ի խմբակի Քանադայի Նոյեմբեր 17էն 18ի ժողովէն առաջ:

Թուրքիա, որ Դ. Մ. Ֆոնտին հետ արդէն 19 միլիարտ տոլարի համաձայնութիւն մը գոյացուցած է, ճնշուածութեամբ տակ է յայտնելու, թէ ճիշդ ի՞նչպէս պիտի գործադրէ պետական ծախսերը կրճատելու իր խոստումները:

Մինչ Տերվիշ կը խօսէր, փոխ վարչապետ Մեսութ Եըմազ կը խոստանար, որ կառավարութիւնը մօտ ատենէն միջոցառումներ պիտի յայտարարէ՝ 2002ի պիւտճէին բանալի թիրախները իրականացնելու համար:

Այդ միջոցառումները հանրութեան պիտի յայտարարուին եւ ընթացքի մէջ պիտի գրուին յառաջիկայ քանի մը օրերուն, ըսած է ան:

ՁԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Միւս կողմէ, ոստիկանութիւնը Երեքաբթի օր ձերբակալած է երկու թուրքեր, որոնք կը փորձէին զէնքերու համար օգտագործել իւրացիոմ ծախել գաղտնի ոստիկաններու:

Ձերբակալութիւնները տեղի կ'ունենային այն օրը, երբ Մ. Նահանգներու նախագահ Ճորճ Պուլ արեւելեան եւրոպացի ղեկավարները կը զգուշացնէր, թէ Ուսամա Պըն Լատէնի «Քաիտա» ցանցը կրնայ կորիզային զէնքեր ձեռք բերել փորձել՝ Մ. Նահանգներու դէմ իր պայքարին թափ տալու համար:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՇԱՐՈՆ ԿԸ ԾՐԱԳՐԷ ՄԷԿ ՄԻԼԻՈՆ ՅՐԵԱՆԵՐՈՒ ՆԵՐԳԱՂԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲԱՆԱԿԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ ՊԱՂԵՍՏԻՆՑԻ ԲԱՂԱՔԱՅԻՆՆԵՐՈՒ ԴԷՄ ԿԱՅՐԱԳՈՒԹԻՒՆԸ



ՓԵՐԷՄ՝ ԼԱՒԱՏԵՍ

Իսրայէլացի զինուոր մը կը հսկէ Ռամալլայի մէջ՝ Ճախքան հեռացումը:

Այսրորդական ներխուժած իսրայէլեան ուժերը երէկ հեռացան Ռամալլայէն՝ պարպելով գրաւուած չորրորդ քաղաքը: Պաղեստինեան երկու քաղաքներ տակաւին իսրայէլեան ուժերուն

հակազիռնի տակ կը գտնուէին: Կը նախատեսուի, որ մնացեալ երկու քաղաքներէն ալ շուտով հեռանան իսրայէլացի զինուորներն ու անոնց հրամայները:

Լով, սակայն վերջ չգորուցեալ շրջանին մէջ իսրայէլեան ուժերուն ներկայութեան: Ռամալլայի մուտքին եւ մօտակայ շրջաններու մէջ

Ծար.ը՝ էջ 10

«ՊԻ - 52» ՏԻՊԻ ՕԴԱՆԱԻԵՐ ԿԸ ՌՄԲԱԿՈԾԵՆ ՔԱՊՈՒԼԻ ՀԻՒՍԻՍԸ ԳՏՆՈՒՈՂ ԹԱԼԵՊԱՆՆԵՐՈՒ ԴԻՐՔԵՐ

Ամերիկեան հսկայ «Պի - 52» տիպի ռազմական օդանաւեր երէկ դարձաւ Աֆղանիստանի մայրաքաղաք Քապուլի հիւսիսը գտնուող թալեպաններու ռազմաճակատները ոմրակոծած են, սակայն իշխող շարժումի պինտայնէրը յայտնած են, թէ ամերիկեան ռումբերը չեն կրցած մաշեցնել իրենց ճակատելու կարողականութիւնը եւ քաղաքային տարածքները:

«Ռոյթըրս» լրատու գործակալութեան մէկ լուսանկարիչը յայտնած է, թէ «Պի - 52» տիպի ռմբաձիգներ առնուպն 5 անգամ թռիչք կատարած են ռազմաճակատներու վերեւ, նախ առանձինն հսկայ ռումբեր արձակելով, ապա թալեպաններու դիրքեր շարք մը աւելի փոքր ռումբերով հարուածելով:

Ընդդիմադիր Հիւսիսային Դաշնակցութեան հրամանատարներէն՝ Ասիլ Խան, յայտնած է, թէ օդանաւերը ճիշդ վայրերը հարուածած են, աւելցնելով, որ անոնք թիրախ առած են Ուսամա Պըն Լատէնի «Քաիտա» ցանցին պատկանող քաղաք եւ փաքիստանցի պինտայնէր, որոնք ճակատակցութիւններ կ'ուրարէին իրար: Օդանաւերու ռմբակոծումներուն պօրակցութեամբ, ընդդիմութիւնը յայտնած է, թէ



Կանաչեղէնի վաճառորդներ Զապուլի մէջ առեւտրի ընթացքին:

հիւսիսային Պալիստինացիներէն մէջ հող շահած են, ինչ որ զայն մօտեցուցած է ռազմավարական կարեւորութիւն ունեցող շրջանային մայրաքաղաք Մապլ - ի - Շարիֆի:

Թալեպանները յայտնած են, թէ արեւելեան Ճալալապատ քաղաքին մօտակայ Սուրխարտի մէջ 6 հոգի սպաննուած է եւ 7 ուրիշներ վիրաւորուած են, երբ ռումբ մը գիւղ մը հարուածած է: Ուաշինկթըն կը թուի ճշնունքանցնել ընդդիմադրութեան վրայ, որպէսզի անիկա օգտուի ստեղծուած ներկայ վիճակէն եւ թալեպաններէն հող ձեռք ձգէ, սակայն բանակը լաւապէս պինուած չէ ընդհանուր յարձակողականի մը անցնելու համար:

Սակայն պոռնացուով մը՝ ռեւէ մէկուն, թէ

Ծար.ը՝ էջ 10

ՀԱՐԻՐԻ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԴԵՄՊԱՆԸ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ երեկոյեան ընդունեց Միացեալ Նահանգներու դեսպան Վինսընթ Պէթըլը, որուն հետ խորհրդակցութիւններ ունեցաւ միջապգային վերջին վարձագումներուն շուրջ:

Հանդիպումէն ետք դեսպան Պէթըլ ըսաւ, որ վարչապետ Հարիրի հաստատած է, որ լիբանանեան կառավարութիւնը յստակ տարբերութիւն կը դնէ դիմադրութեան եւ ահաբեկչութեան միջեւ եւ թէ այս կեցուածքը պիտի ըլլայ իր ուղեցոյցը ինչ կը վերաբերի Ուաշինկթընի պահանջին՝ ստեղծելու Հըզպալլայի դրամատնային հաշիւները:

Ամերիկացի դեսպանը նշեց, որ Ուաշինկթընի ուշադրութիւնը կեդրոնացած է Ուսամա Պըն Լատէնի «Քաիտա» կապակերպութեան վրայ:

ՆՈՅԵՄԲԵՐԻ ՎԵՐՁԵՐԸ

ՔՈՉԱՐԵԱՆ – ԱԼԻԵԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄՈՍԿՈՒԱՅԻ ՄԷՋ



Քոչարեան կ'ընդունի Միսքի համաճախագահները:

Ռուսիոյ արտաքին գործոց փոխ նախարար Վիլաչեալա Տրուպիքով յայտարարեց, որ Հայաստանի եւ Արարչճանի նախագահները՝ Ռոպերթ Քոչարեան եւ Հայտար Ալիեւ, Նոյեմբերի վերջերը հանդիպում մը պիտի կայացնեն Մոսկուայի մէջ:

Տրուպիքով նշեց, որ ԵԱՀԿի Մինսքի խմբակը վստահ է, որ ոչ Երեւան եւ ոչ Պաքու կը պատրաստուին Լեռնային Ղարաբաղի տագնապին պինուորական լուծում մը տալու համար:

Նախագահ Ռոպերթ Քոչարեան երէկ ընդունեց ԵԱՀԿի Մինսքի խմբակի համանախագահներ Նիքոլայ Կրիպորով, Ֆիլիփ Տէ Սիւրմէնը եւ Ռուտոյֆ Փերինան, որոնց կ'ընկերակցէր Տրուպիքով:

Հանդիպումէն ետք տեղի ունեցած մամուլի ասուլիսին ընթացքին համանախագահները յայտարարեցին, որ նախագահ Քոչարեանի ներկայացուցած են Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման նոր առաջարկը, որ մշակուած է այցելութեան նախօրեակին Լիպպոնի մէջ կայացած համանախագահներու հանդիպումին ընթացքին:

Ռուսիոյ արտաքին գործոց փոխ նախարար ասուլիսի ընթացքին յայտնեց, որ նոր առաջարկը բխած է նախորդ առաջարկներէն, եւ թէ համանախագահները չեն հրաժարած Քի Ուէս

Ծար.ը՝ էջ 10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ՝ ՔՆՆԱՐԿՈՒՄԻ ԱՌԱՐԿԱՅ

Հայաստանի նախագահ Ռոպերթ Քոչարեան երէկ ընդունած է Համաշխարհային Դրամատան կովկասեան տնօրէն Ճուտի Օքոնըրը:

Հանդիպումին ընթացքին Քոչարեան եւ Օքոնըր արծարծած են Հայաստանի տնտեսական իրավիճակը, եւ դրական գնահատած են տնտեսական տեղաշարժը:

Օքոնըր յոյս յայտնած է, որ արձանագրուած տնտեսական աճը կը շարունակուի: Նախագահ Քոչարեան ընդգծած է աշխատատեղերու ստեղծման միտող տնտեսական քաղաքականութեան անհրաժեշտութիւնը: Կողմերը նաեւ անդրադարձած են Հայաստանի կառավարութեան եւ Համաշխարհային Դրամատան միացեալ ծրագիրներուն:

ԹՈՒՐՔԻՈՅ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԸ ՅՈՒՆԱՍՏԱՆ Կ'ԱՅՑԵԼԷ

Աթէնք, 7 (ՌՈՅԹԸՐԸ)՝ Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Իսմայիլ Ճէմ Չորեքաբթի օր Ցուլնաստան հասած է, այցելութեան մը համար, որուն նպատակը ՕԹԱՆԻ երկու անգամ երկիրներուն միջեւ յարաբերութեանց թափ տալ է: Հաւանական կը նկատուի, որ Աթէնք եւ Անգարա շրջանցեն Կիպրոսի փշոտ հարցը:

Ճէմ ըսած է, թէ երկօրեայ իր այցելութեան ընթացքին գործակցութեան համաձայնագիրներ պիտի կնքէ Ցուլնաստանի հետ եւ Սեպտեմբեր 11ի յարձակումներուն լոյսին տակ «ահաբեկչութեան դէմ պատերազմ»ին հարցը պիտի քննարկէ:

Ճէմի այցելութիւնը տեղի կ'ունենայ Թուրքիոյ վարչապետ Պիլիքէնի իճեւիթի մէկ յայտարարութենէն նուազ քան շաբաթ մը ետք, ինչ կը վերաբերի Կիպրոսը կցելու, եթէ կղզին անդամակցի Եւրոպական Միութեան:

ՆԱԽԱԳԱՅ ԱՍԱՏ ԸՆԴՈՒՆԵՑ ՎԱՐՉԱՊԵՏ ՅԱՐԻՐԻՆ

Սուբիոյ նախագահ Պաշտոնի Ասատ երէկ Դամասկոսի մէջ ընդունեց վարչապետ Ռաֆիք Հարիրին:

Սուբիոյ պաշտօնական «Սաճա» լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ հանդիպումին ընթացքին խօսակցութեան նիւթ դարձած են շրջանային եւ միջազգային բեմերուն վիճակներն ու անոնց անդրադարձները Լիբանանի եւ Սուբիոյ վրայ, ինչպէս նաեւ՝ երկու երկիրներուն եղբայրական յարաբերութիւնները:

Վարչապետ Հարիրիի մօտիկ աղբիւրներ յայտնեցին, որ հանդիպումին կատարեալ հասկացողութիւն տիրած է, ուր մերժելի է հաւանական զէմ պայքարի պատրուակով դիմադրութեան զէմ որեւէ քայլ եւ անհրաժեշտ է իրարմէ զանազանել ահաբեկչութիւնն ու դիմադրութիւնը:

Շարք՝ էջ 10

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ 1700ԱՄԵԱԿԻ ՅԱՆՁՆԱՆՈՒՄԲԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆԻ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԺՈՂՈՎԻՆ

Քրիստոնէութեան Հայաստանի մէջ պետական կրօն հռչակման 1700ամեակի եկեղեցական կեդրոնական յանձնախումբի գործադիր մարմինին եկրափակիչ ժողովը գումարուեցաւ Ս. Էջմիածինի մէջ, Հինգշաբթի, 1 Նոյեմբեր 2001ին:

Այս ժողովին իրենց մասնակցութիւնը բերին Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան ներկայացուցիչներ՝ Նարեկ Ծ. վրդ. Ալեքսանդրեան եւ Շահան Ծ. վրդ. Սարգիսեան:

Կեդրոնական յանձնախումբի 1700ամեակի գրասենեակի վարիչ - քարտուղար Յովնան արք. Տէրեւրեան ներկայացուց իր գործունէութեան տեղեկագիրը:

Հայր Նարեկ Ալեքսանդրեան, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան 1700ամեակի վարիչ - քարտուղարի հանգամանքով, ներկայացուց:

Շարք՝ էջ 10

ՄԱՀԱԶԴ

Տիկին Մարի Ռաստեան եւ զաւակունք

Ճամպազեան ընտանիք

Եւ համայն ազգականներ կը գոլթեն իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր, աներոյ եւ հարազատին՝

ՆԻԿՈՂՈՍ ՌԱՍՏԵԱՆԻ

(Ծնեալ՝ 1915ԻԳ)

մահը, որ պատահեցաւ Կիրակի, 4 Նոյեմբեր 2001ին, Սիտնիի մէջ (Աւստրալիա):

Թաղման արարողութիւնը կատարուեցաւ Սիտնիի մէջ:

●Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ:

ՄԱՀԱԶԴ

Տէր եւ տիկին Միհրան Շամլեան եւ զաւակունք

Տէր եւ տիկին Զաքար Զաքարեան եւ զաւակունք

Տիկին Մարի Յակոբեան եւ զաւակունք

Տէր եւ տիկին Յովիկ Յակոբեան եւ զաւակունք

Տէր եւ տիկին Խոսրոս Աբրահամեան եւ զաւակունք

Տէր եւ տիկին Գալուստ Արէթեան եւ զաւակունք

Օր. Մատեն Եսայի

Տիկին Ժակլիէթ Քրտոբեան եւ զաւակունք

Տէր եւ տիկին Ժորժ Թարապալ

Զպլաբեան ընտանիք

Եւ համայն ազգականներ կը գոլթեն իրենց մօր, քրոյ, հօրաքրոյ, մօրաքրոյ եւ հարազատին՝

ՍՐԲՈՒՀԻ ԾԱՍԼԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Զորեքչաբթի, 7 Նոյեմբեր 2001, առաւօտեան:

Յուդարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Հինգշաբթի, 8 Նոյեմբեր, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

●Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ:

●Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Պուրճ Համուտ, Նոր Մարաշ թաղ, Ուրբաթ 9 եւ Շաբաթ 10 Նոյեմբերին:

ՄԱՀԱԶԴ

Տիար Սահակ Ապոյեան եւ զաւակը՝ Նարեկ

Վարուժան Մինասեան եւ ընտանիք

Տէր եւ տիկին Աբրահամ եւ Ժանէթ Սաղորճեան

Տէր եւ տիկին Վահէ եւ Սիրվարդ Պատմանեան

Եւ զաւակունք

Տէր եւ տիկին Թառնֆիք եւ Ալիս Արալա

Եւ զաւակունք

Եւ համայն ազգականներ կը գոլթեն իրենց կնոջ, մօր, քրոյ եւ հարազատին՝

ԱՐՏԵՄԻՍ ԱՊՈՅԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 6 Նոյեմբեր 2001ին, յետ ինքնաշարժի արկածի, Շիթրալի մէջ:

Յուդարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Զորեքչաբթի, 7 Նոյեմբեր, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Դամասկոսի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ:

●Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ:

ՆԱԽԱԳԱՅԱԿԱՆ ՊԱՍՏԻՆ ՄԷՋ

ԼԱՇՈՒՏ, ՊԵՐՐԻ ԵՒ ՇԱՐԻՐԻ ԸԱՆԴԻՊՈՒՄ

Նախագահ Կոր.

Էմիլ Լաիուտ, խորհրդարանի նախագահ

Նեպիի Պրերի եւ վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ Պաալատայի պալատին մէջ գումարեցին ժողով մը,

որուն ընթացքին քննարկեցին հրա-

տապ հարցերն ու ընդհանուր վարգացումները:

Նախագահ Լաիուտ երէկ կէսօրէ ետք ժամը 12:30ին ընդունեց խորհրդարանի նախագահ Նեպիի Պրերին. մօտաւորապէս ժամ մը ետք անոնց միացաւ վարչապետ Ռաֆիք Հարիրի:

Քննարկումները շարունակուեցան ձա-

շի սեղանին շուրջ: Ճաշկերոյթը վերջացաւ ժամը 3:00ին քիչ ետք, եւ Պրերի ու Հարիրի նախագահական պալատին մէկնեցան ատանց յայտարարու-

թիւն կատարելու:

Պրերի մեկնած ատեն միայն ըսաւ.

«Նախագահ Լաիուտ կը խօսի բոլորիս անունով»:

Նախագահական պալատի տեղեկատուական գրասենեակը յայտարարեց, որ հանդիպումը ընթացած է դրական մթնոլորտի մէջ եւ քննարկած են շրջանային ու միջազգային վարգացումները, որոնց առնչու-

թեամբ համակարծիք գտնուած են իշխանութեան պետերը եւ վերահաստատած Լի-

բանային սկզբունքային կեցումները:

Հարիրի ներկայացուցած է արտասահ-

ման իր այցելութիւններուն արդիւնքները:

«Ներքին հարցերուն առնչութեամբ իշխանութեան պետ-

եր վերահաստատե-

ցին միասնականու-

թեան եւ ազգային գի-

տակցութեան կարեւորութիւնը եւ վարչա-

կան ու դրամական բարեկարգումները

շարունակելու անհրաժեշտութիւնը», յայտնեց հաղորդաբ-

րութիւնը, աւելցնելով, որ անոնք գոհունա-

կութիւն յայտնած են ներքին կայունու-

թեան համար:

Նախագահ Լաիուտ երէկ ընդունեց այցելութիւնները երեսփո-

խաններ Աթէֆ Մամտալանիի, Ժիհատ Սամաուի եւ Նասէր Քանտիլի, Եգիպտոսի

դեսպան Հաթէմ Սէյ-

ֆել Նասրի, ընդհանուր դատախապ Ատ-

նան Ատուուի եւ պետութեան անվտանգութեան ուժերու ընդ-

հանուր տնօրէն Կոր. Էտուար Մանսուրի այցելութիւնները:

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՔՆՆԱԴԱՏՈՂ ԿԵՑՈՒԱԾՔՆԵՐ

Հրգպալլան Միացեալ

Նահանգներուն կողմէ

ահաբեկչական նկատուող

կազմակերպութիւններուն

ցանկին վրայ աւելցնելու

քայլն ու անոր դրամատնա-

յին հաշիւները ստեղծելու

պահանջը դատապարտող

եւ քննադատող յայտարար-

ութիւնները շարունակ-

ւեցան երէկ:

Շիիններու Գերագոյն

խորհուրդի փոխ նախագահ

Հէյն Ապտէլ Էմիր Քապա-

լան երէկ այցելեց Հրգպալ-

լանի ընդհանուր քարտու-

ղար Հէյն Հասան Նասրալ-

լայի: Տեղական եւ արտա-

քին դարգացումները քննարկելէ ետք Հէյն Քա-

պալան ըսաւ, որ Միացեալ

Նահանգներու Հրգպալլայի

ահաբեկչութեան յանցանքով

ամբաստանութիւնը Հրգ-

պալլայի պատուաբեր

չթանշան մըն է:

Ան ընդգծեց, որ Միացեալ

Նահանգներ կ'ուզեն, որ բոլորը

դառնան իրենց արբանեակները, իսկ իրենց

հանդէպ անհնազանդ

գտնուողները ահաբեկիչ-

ներ կը նկատեն:

Շէյն Մոհամէտ Հիւ-

սէյն Ֆատալա երէկ հա-

ւաստեց, որ Հրգպալլա,

Համաս եւ Իսլամական Ժի-

հատ ահաբեկչական կազ-

մակերպութիւններու ան-

ուանացանկին վրայ աւելց-

նելով՝ Ուաշինկթըն կը կի-

րարկէ իր ահաբեկչական

ոճը, եւ այս որոշումով

Միացեալ Նահանգներ կ'ընդա-

ռաջեն իսրայէլեան պա-

հանջներուն: «Այս որոշու-

մը իր տարողութեամբ

կրնայ մեկնակէտը դառնալ

արբանեակն եւ Իսլամնե-

րուն զէմ ամերիկեան նոր

պատերազմին», ըսաւ ան:

Նախկին վարչապետ Սե-

լիմ Հրո ըսաւ, որ Լիբանան

բնականաբար պիտի մերժէ

ստեղծելու Հրգպալլայի

դրամատնային հաշիւները,

եթէ անոնք գոյութիւն ու-

նին: «Եթէ Միացեալ Նա-

հանգներ Հրգպալլան կը

մտածանքները կ'աւտո-

շարժուի, ապա ան մեզի

համար իսրայէլը ահաբե-

կող պատուաբեր դիմադ-

րութեան շարժում է», ըսաւ

Հրո:

Գաղթականներու հար-

ցներու նախարար Մարուան

Համատէ երէկ ընդունեց

երեսփոխան Պուրճոս Հար-

պը, ապա յայտարարեց, որ

անընդունելի է կուրօրէն

ահաբեկչութեան ամբաս-

տանութիւն ուղղել: «Կը

մերժենք լիբանանեան եւ

պաղեստինեան դիմադրու-

թիւնները ընդգրկող ահա-

բեկչութեան անուանացան-

կերը», ըսաւ ան եւ աւել-

ցուց, որ այս կեցումաձը

պիտի արտայայտուի պաշ-

տօնական, կառավարական,

խորհրդարանական եւ քա-

ղաքական մակարդակի

վրայ:

Հարպ ըսաւ, որ ճիշդ չէ

իրարու հետ չփոթել դի-

մադրութիւնն ու ահաբեկ-

չութիւնը, եւ այս առնչու-

թեամբ ամերիկեան կեց-

ւածքը զարմանք կը պատ-

ճառէ: Ան կոչ ուղղեց փո-

խելու այս կեցումաձը եւ

մտահոգութիւն յայտնեց,

թէ ՄԱԿ կրնայ կառչել

անոր գործադրութեան եւ

այդ պարագան ժխտական

անդադարձներ պիտի ու-

նենայ Լիբանանի համար:

STUDIO
Lantern
●Կը ստանճնէ
ուրախ
առիթմերու
video
Գկարահանումներ
Հեռ. 01-268866
Էլ 03-995399

ԿԻԹԱՌԻ ԴԱՍԵՐ
●Եեռաձայնել՝ 04-414751:

ԱՆՁՆԱԿԱՆ
ԴԱՍԵՐ

●Նախակրթարանի հա-
մար, արաբերէն դասեր:
Հեռ. 03-782323:

ԿԸ ՓՆՏՈՒ

●Թաթիկ Դանիէլ Կարա-
պետեան (Շայաստան)

«ՍԱՊԵՆԱ» ՍՆԱՆԿԱՑԱՒ



«Սապենա»ի պաշտօնեացիները ցույցի ընթացքին:

ՊՐԻԻԲՍԵԼ, 7 (ՌՈՅԹԸՐԸՁ).— Պրիբսելի մէկ ատենալը յայտարարեց, որ պելձիքական «Սապենա» օդանաւային ընկերութիւնը սնանկացած է. սակայն կատարութիւնը յայտնեց, որ յաջողած է գտնել սեփական ներդրողներ. հիմնելու համար օդանաւային նոր ընկերութիւն մը:

Պարտքերու բեռին տակ կքած «Սապենա»ն առաջին եւրոպական օդանաւային ընկերութիւնն է, որ կը սնանկանայ 11 Սեպտեմբերին Միացեալ Նահանգներու վրայ կատարուած ահաբեկչական յարձակումէն ետք:

Հանրօգուտ շինութեանց նախարար Ռիք Տէյմս մամլոյ ասուլիսի մը ընթացքին յոյս յայտնեց, որ օդանաւային նոր ընկերութիւն մը յառաջիկայ քանի մը օրերու ընթացքին թոյլքներ պիտի կատարէ դէպի Եւրոպա, Ափրիկէ եւ ամերիկեան երկու քաղաքներ:

«Սապենա»ի վերջին թռիչքը կատարուեցաւ Չորեքշաբթի առաւօտեան պաշտօնեաներու անձնակազմին մէջ ստեղծելով լացուկոծ: «Սապենա» ընկերութեան սնանկացումին պատճառով գործէ արձակուեցան 12,000 պաշտօնեա-

Ծար.ը՝ էջ 10

ՍՊԱՆԻԱ

ԴԱՏԱԻՈՐ ՄԸ ԿԸ ՍՊԱՆՆՈՒԻ

ՄԱՏՐԻԺ, 7 (ՌՈՅԹԸՐԸՁ).— Մատրիտի մէջ ակնհայտաբար ինքնաշարժի մը պայթումէն մէկ օր ետք, Չորեքշաբթի օր պայքերու շրջանին մէջ սպաննուեցաւ դատաւոր մը եւ անգամ մը եւս ամբաստանութիւնը ուղղուեցաւ ԷթՍիի դէմ:

Պայքերու շրջանային կատարութեան բանքերը յայտնեց, որ Խոսէ Մարիա Լիտոն սպաննուեցաւ իր բնակարանին դիմաց, Պիլպաս քաղաքին մօտ՝ Կեթքոտիի մէջ: Բանքերը անելցուց, որ Լիտոն ինքնաշարժին մէջն էր, երբ երկու պինեալներ մօտեցած ու փամփոշտներու տարափի մը տակ առած են պայն: Ականատեսներ ըսին, որ պինեալները վազելով փախուելու տուած են ոճիրին վայրէն:

Քաղաքական անձնաւորութիւններ անմիջապէս ամբաստանեցին պայքերու անջատողական ԷթՍ շարժումը՝ պահանջելով անոր ճնշումը:

Երեքշաբթի օր Մատրիտի մէջ ակնհայտաբար ինքնաշարժի մը պայթումը անելի քան հարիւր վիրաւոր պատճառած էր:

ՅԱԹՀԻ ՍՈՒՐՈՒՐ՝ ԵԳԻՊՏՈՍԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

ԳԱՀԻՐԷ, 7 (ՌՈՅԹԸՐԸՁ).— Եգիպտոսի խորհրդարանը միաձայնութեամբ վերընտրեց Ֆարիի Սուրուրը իբրեւ խորհրդարանի նախագահ, յայտնեցին խորհրդարանական աղբիւրներ, Չորեքշաբթի օր:

Սուրուր նախագահ Հիւսնի Մուպարաքի դեկավարած Ազգային Ժողովրդավարական Կուսակցութեան առաջատար դէմքերէն է: Ան ստացաւ 438 քուէ ընդդէմ՝ վերոյի: 16 երեսփոխաններ ներկայ չգտնուեցան ընտրութիւններուն:

ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԻՆ ՈՒՂԻՆ ԿԸ ՀԱՐԹՈՒԻ

ՄԱՐԱԲԷՇ, 7 (ՌՈՅԹԸՐԸՁ).— Աշխարհի բազմաթիւ երկիրներէ նախարարներ Չորեքշաբթի օր քայլ մը անելի մօտեցած էին 1997ի կլիմայական փոփոխութեան վերաբերեալ համաձայնագիրը ի պօրու դարձնելու՝ անոնց պաշտօնատարներուն կողմէ բանալի համաձայնութեան մը գոյացումէն ետք:

Ծար.ը՝ էջ 10

ՄԵԾ ԹԻՒՈՎ ԵՐՈՊԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԸ ՄԱՍՆԱԿՅԻՆ ՊԱՂՏԱՏԻ ՏՕՆԱԿԱՃԱՌԻՆ

ՊԱՂՏԱՏ, 7 (ՌՈՅԹԸՐԸՁ).— Եւրոպական հարիւրաւոր ընկերութիւնները կը մրցակցին ծախելու համար իրենց արտադրութիւնները Պաղտատի առեւտուրի տարեկան տօնա-վաճառին, հակառակ անոր որ ՄԱԿի պատ-ժամիչոցները դժուարու-

թիւններ կը ստեղծեն: Այս տարուան 14օրեայ տօնավաճառը, որուն բացումը կատարուեցաւ անցեալ շաբաթ, մեծագոյնն է անոր վերսկսե-լէն ի վեր: Ծոցի պատե-րազմէն ետք, տօնավա-ճառը վերսկսաւ 1995ին: 48 երկիրներէ 1650 ընկե-րութիւններ կը մասնակ-

ցին այս տարուան տօնա-վաճառին: Մեծագոյն թիւերը ունին Գերմա-նիա, Ֆրանսա, Իտալիա, Սպանիա, Դանիա, Աւստրիա եւ Թուրքիա: Ֆրանսական 104 ընկե-րութիւններու կարգին են քարիւղի «Թոքալ Ֆի-նա Էլֆ»ն ու ինքնաշար-ժի «Փեօօ»ն: Տօնավա-ճառին ցուցադրուած են ամէն տեսակի արտադ-րութիւններ:— Ինքնա-շարժ, երկրագործու-թեան ու ճարտարա-ր-ւեստի գործիքներ, դե-ղեր, հիւսուածեղէն, ելեկտրական գործիքներ եւ բնակարանային անհը-րածեղ գոյքեր: Չեն ցու-ցադրուել միայն զինա-կան արտադրութիւններ, որովհետեւ Պաղտատի արգիւրուած է զինական գոյքեր գնել:

Մեծ թիւով ներկայ են նաեւ ուսանական ընկե-րութիւններ, նկատի ու-նենալով, որ Մոսկուա մեղմ կեցուածք կ'որդեգ-րէ Պաղտատի հանդէպ, պահանջելով, որ ՄԱԿի պատժամիչոցները ջնջուին:

Միւս կողմէ, ՄԱԿի կողմէ հրապարակուած տեղեկագիր մը յայտնեց, որ այս տարուան ըն-թացքին իրաքեան քա-րիւղի մաքսանենգու-թիւնը կէսի իջաւ, որով-հետեւ իրան արգիւած է անցըր քարիւղատարնե-րու, որոնք մաքսանեն-գուած քարիւղ կ'արտա-ծեն Իրաքէն՝ խախտելով ՄԱԿի պատժամիչոցները:

Տեղեկագիրը կը նշէր սակայն, որ Իրաք յաջո-ղեցաւ դէպի Սուրիա հասնող քարիւղատար խողովակին ճամբով յա-ւելեալ քարիւղ մաքսա-նենդել: Իրաքեան քա-րիւղը բեռնատարներով կը մաքսանենգուի նաեւ դէպի Թուրքիա եւ Յոր-դանան: ՄԱԿի բարձ-րաստիճան պաշտօնա-տար մը ըսաւ, որ անց-նող տարուան ընթաց-քին, Իրաք 11,6 միլիոն տակառ մաքսանենգած է ծովու ճամբով:

Ծար.ը՝ էջ 9

ՔԱԹԱՐՑԻ ՄԸ ԿՐԱԿ ԿԸ ԲԱՆԱՅ ՕԴՈՒԺԻ ՄԷԿ ԽԱՐԻՍԽԻՆ ՄԷՋ

ՏՈՀԱ, 7 (ՌՈՅԹԸՐԸՁ).— Քաթարցի մը Չորեք-շաբթի օր կրակ բացած է օդուծի մէկ խարխիւին վրայ, որ կ'օգտագործուի ամերիկեան օդանա-ւերուն կողմէ: Պահակները անմիջապէս հակա-դարձեցին՝ սպաննելով քաթարցին, յայտնեցին պաշտօնատարները:

Միջադէպը ապահովութեան մտավախու-թիւններ կը ստեղծէ Առեւտուրի Համաշխար-ային կազմակերպութեան:

Ծար.ը՝ էջ 9

ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱՁՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ԻՆՉՊԵՍ ԳՈՐԾԱԾԵԼ FUEL CARD-Ը

Ձեր ինքնաշարժին պենզին, մագլորին, իւղին, ինչպէս նաեւ լուալու համար, վճարումին հետ միաժամանակ մերկայացուցէք FUEL CARD-ը, այս ձեւով ձեր մասնակցութիւնը բերած կ'ըլլաք տնտեսական ծրագիրներու յաջողութեան:

ԻՆՉՊԵՍ ՍՏԱՆԱԼ FUEL CARD-Ը

FUEL CARD-ը կրնաք ստանալ հետեւեալ կեդրոններէն.-
• ԱՖՀԻԼի գրասենեակ, Պուրճ Դամուտ
• Համագործակցող գրախանութ, Պուրճ Դամուտ
• Գրատուն Caravelle, Չալքա
• Գրատուն Sava, Այնճար
• Գրատուն Կոմիտաս, Պէյրութ
• Obelix հաստատութիւն, Անթիլիաս

ՔԱՐԸ ԿԸ ՍՏԱՆԱԼ ՉՐԻՕՐԷՆ



FUEL CARDԸ ԿՐՆԱԸ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԴԵՏԵԲԵԱԼ ԿԱՅԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ

1. CORAL JAL EL DIB, Ժլ էլ Տիպ
2. HYPCO ANTELAS, Հարաք Ալ Դաուարնէ
3. SPEED ANTELAS, Կարողիկոսարանի դիմաց
4. CORAL BAABDAT, Պապալթե մայրուղի
5. SPEED ACHRAFIEH, Էլ Նահր PEUGEOT ընկ. առաջ
6. HYPCO HAMRA, Պանք Տի Լիպանէ առաջ
7. MEDCO KARANTINA, Զարանթիայի մայրուղի
8. CORAL BHAMDOUN, Դամակոսի մայրուղի
9. CORAL MAR MIKHAEL, Սար Միխայէլ, Սաատ պողոտայ
10. SPEED ALITTIHAD, Կալեի Իթթիհատ
11. MANAR FANAR, Ֆանար, Նաուր պանդոկին կից
12. CALTEX ANJAR, Այնճար
13. BASSIL DORA, Տորայի կամուրջ
14. ՀԱՅԱԿԱՆ ԿԱՅԱՐԱՆ, Տորա, «Ալմագա»ի կից

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնէ՝ 01-242556 քիւին:

Մագլորի սպասարկութեան համար հեռաձայնէ՝ 04-715111, 04-715222 եւ 04-715333 քիւերուն:

ԱՐԺԷՔՍԻՈՐ ՆՈՒԷՐՆԵՐ ԵՒ ԻՆՔՆԱՇԱՐԺ ՄԸ

ՓՐՈՏԻ ՊԻՏԻ ՉՀՐԱԺԱՐԻ

ՖՐԱՆՔՅՈՐԹ, 7 (ՌՈՅԹԸՐԸՁ).— Եւրոպական Յանձնաժողովի նախագահ Ռոմանօ Փրոտի մերժեց իր իշխանութեան շուրջ կատարուած քննադատութիւնները, յայտնելով, որ իր նստաշրջանը աւարտելէ առաջ պիտի չիրաժարի իր պաշտօնէն:

«Հակառակ բոլոր ծիտական ձայներուն, պիտի մնամ իմ գրասենեակին մէջ մինչեւ 2005», ըսաւ ան գերմանական օրաթերթի մը հետ ունեցած իր հարցազրոյցին ընթացքին:

Այս պաշտօնին պուզահեղ իր ունեցած ոչ բաւարար լեզուական գիտութեան մասին՝ Փրոտի, Իտալիոյ նախկին վարչապետը, յայտնեց, թէ բաւարար չափով ֆրանսերէն եւ անգլերէն գիտէ, սակայն ոչ գերմաներէն:

«Չիս յանձնաժողովի նախագահ ընտրած էք, թէ թարգմանիչ նշանակած: Տարիներով ամենալաւ համալսարաններուն մէջ անգլերէն լեզու սորված եմ, ներառեալ՝ Հարվարտ», ըսաւ ան:

Փրոտի լուսարձակի տակ առնուեցաւ անգլիական եւ գերմանական տեղեկատու աղբիւրներու կողմէ, երբ ան քննադատեց Բրիտանիան, Ֆրանսան եւ Գերմանիան, որոնք Կիրակի օր Լոնտոնի մէջ ԱՖղանիստանի դէմ մղուող պատերազմին մասին քննարկումներ կատարած էին:

Տեղեկատու աղբիւրներ ենթադրեցին, որ Փրոտի անկարող էր անգլերէն կամ ֆրանսերէն խօսելու:

«ՔՈՆՔՈՐՏ»ՆԵՐՈՒ ԹՌԻԶԲԸ ՎԵՐՍԿԱՍԻ

ՆԻՒ ԵՈՐՔ, 7 (ՌՈՅԹԸՐԸՁ).— Ճամբորդատար ամէնէն արագ օդանաւը՝ «Քոնքորտ», Չորեքշաբթի օր (երէկ) վերսկսաւ թռիչքներուն՝ մօտաւորապէս մէկուկէս տարուան դադարէ մը ետք: «Էր Ֆրանս»ի պատկանող «Քոնքորտ» մը 92 ճամբորդներով Փարիզէն Նիւ Եորք հասաւ՝ չորս ժամուան յաջող թռիչքով մը կտրելէ ետք Սոյանտանը:

«Պրիթիշ Էրուելլ»ի պատկանող «Քոնքորտ» օդանաւ մըն ալ Լոնտոնէն Նիւ Եորք թռիչք կատարեց: Բրիտանական օդանաւը փոխարրեց գործատէրեր ու այլ անձնաւորութիւններ, որոնք «Քոնքորտ»էն յատուկ հրաւեր մը ստացած էին իշխեալ թռիչքը կատարելու համար:

Ֆրանսական ու բրիտանական օդանաւային ընկերութիւնները յայտարարած էին, որ «Քոնքորտ»ի թռիչքները պիտի վերսկսին Նոյեմբեր 7ին: Անոնք անցեալ ամիս փորձ-թռիչքներ կատարեցին՝ կարգ մը քարեփոխութիւններու ենթարկելէ ետք օդանաւերը՝ մէկուկէս տարի առաջ պատահած արկածին յոյսին տակ:

ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻՑԵԱԼ ԷՄԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱՆՏԵԼ ՓԱՌՈՒՍԻ ԶԱԽՈՂ ՓՈՐՁ ՄԸ

ՏՈՒՊԱՅ, 7 (ՌՈՅԹԸՐԸՁ).— Արաբական Միացեալ Էմիրութիւններու ոստիկանութիւնը Ռաս Էլ Խայմայի մէջ ձախողութեան մատնեց 20 օտար արգելափակելանքներու բանտէն փախուստ տալու փորձը, յայտնեց պաշտօնական «Ուամ» լրատու գործակալութիւնը, Չորեքշաբթի օր:

Ռաս Էլ Խայմայի ոստիկանապետ Վոր. Մուհամետ Ալնուպի յայտնեց, որ բանտարկեալները Երեքշաբթի գիշեր ցոյցեր կատարած էին եւ փորձած էին բանտին դարպասը խորտակել: Ոստիկանութիւնը անմիջապէս հակակշիռի տակ առած է կացութիւնը, առանց ռեւէ անհատի վնաս պատճառելու բանտին մէջ, ուր կը գտնուին անելի քան 100 բանտարկեալներ, նշեց «Ուամ»:

Անցեալ շաբաթ Տուպայի բանտերէն մէկուն մէջ 14 բանտարկեալներ կոհ գացած էին եւ 15 ուրիշներ վիրաւորուած բանտէն փախուստ տալու ընթացքին ծագած հրդեհի մը պատճառով:

ՌՈՊԸՐԹՍԸՆ ԿԸ ԶԳՈՒՇԱՅՆԷ ՄԱԿԵԴՈՆԻԱՆ

ՍՔՈՓԷ, 7 (ՌՈՅԹԸՐԸՁ).— ՕԹՍԻ ընդհանուր քարտուղար Ճորճ Ռոպրորսըն Չորեքշաբթի օր յայտնած է, որ զգուշացուցած է Մակեդոնիան, թէ կրնայ դարձեալ համայնքային բնոյթի բախումներ դիմագրաւել եթէ արագօրէն չվաւերացնէ քաղաքային իրաւունքներու վերաբերեալ բարեկարգումներ:

Արեւմուտքին օժանդակութեամբ մշակուած ծրագիրին նպատակը ալպանացի փոքրամասնութեան ըմբոստներուն կողմէ ըմբոստութեան վերջ տալ է: Մնոր գործադրութիւնը պզգայնականներու կողմէ կը խոչընդոտուի:

Այսուհանդերձ խորհրդարանին կողմէ ծրագիրին վաւերացումին գծով քայլեր ընթացքի մէջ դրուած են եւ Ռոպրորսըն կը յուսայ, որ անոնց վրայ հիմնուելով կարելի պիտի ըլլայ այդ գծով «խորհրդարանական գործընթացը աւարտել»:



L. O. ԽԱԶԻ «ՆԱՅԻՐԻ» ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՍՆԱՃԻՂ

ԸՆԿԵՐԱՅԻՆ Բ. ՀԱՆԴԻՊՈՒՄ

Տեղի կ'ունենայ Երեքշաբթի, 13 Նոյեմբեր 2001, առաւօտեան ժամը 10:00ին, Աղբալեան ակումբի «Սերժ Թովմասեան» սրահին մէջ:

Դասախօս՝

ԸՆԿՀ. ՍՕՍԷ ՃԻՆՊՈՇԵԱՆ

Նիւթ՝

«ԱՅՍՕՐՈՒՄՆ ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ԿԻՆԸ»

• Հիւրախրոթիւն վարչութեան կողմէ:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՅԱԽԵՐԺԱԿԱՆ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՄԲ

Լիբանանի անհեթեթ եւ հոգեմաշ պատերազմը նաեւ խլեց մեր ընտրելազոյն տղոցմէն շատերը: Գաղութին կրած նիւթական վնասներէն աւելի ծանրն ու ահաւորը իրենց ողջ էութիւնն ու կարելիութիւնները Հայ Դատի պահանջատիրական պայքարին ի սպաս դնելու ուխտով հրապարակ իջած այդ անգուգական տղոց անդամանելի կորուստն էր: Նահատակութիւնը հայ ժողովուրդի անժամանցելի իրաւունքներու ձեռք բերման տենչով ճենճերող այն անձնամուռ երիտասարդներուն, որոնք Հայ Դատի յաղթանակին ի խնդիր իրենց հողեզէն անօթը գոհաբերելու փոխարէն՝ ինկան բոլորովին խորթ ու ալիմաստ ճակատներու վրայ, կոյր մահուան շանթերէն ու ճակատագիրին դաւերէն թեւաբեկ:

28 Մարտ 1976ին ահաւոր պայթում մը կը ցնցէր «Աղբայեան» ակումբը: Լուրը կը տարածուէր կայծակի արագութեամբ: Իր ծայր աստիճան զգուշաւորութեամբ, արթնութեամբ, պաղարիւնութեամբ քաշածանօթ «Պարսկաստանի խորքից» եկած այս տղան՝ հեղաճաճորդ, ընկերասէր, խստապահանջ եւ համակներկու մ ու հաւատք ընկ. Սերժ Թովմասեանը գերագոյն զոհաբերութեամբ կը պատասխանէր մահուան գործիքին լարած դաւին՝ փրկելու տասնեակ մը երիտասարդ կեանքեր:

ԸՆԿ. ՍԵՐՇԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Քաղաքացիական պատերազմը չի խնայեր ո՛չ մէկուն: Իր առել եւ կը քանդէ ամէն ինչ, զարմանալիօրէն սկսելով ընկերներէն: Շատեր գոհուեցան ճակատի վրայ, շատեր զոհ գացին կորսուած փամփուշտի, բոլորն ալ ինկան, յուզում եւ ցաւ պատճառեցին: Բայց այս մէկը տարբեր էր...

Լուրը կայծակի արագութեամբ հասաւ: Անհաւատալի էր: Ո՛չ ոք կը հաւատար, կ'ուզէր կամ կրնար հաւատալ: Ի՞նչպէս, ե՞րբ, ինչո՞ւ. հարցումներ, որոնց պատասխանը մէկ էր. ընկ. Սերժը, Սերժիկը գնաց...

Այո՛, այս մէկը տարբեր էր, որովհետեւ կորուստը տարբեր էր, մեծ էր: Մանաւանդ որ ընկ. Սերժ Թովմասեան մէկն էր անոնցմէ, որոնք կրնան իրապէ՛ս ապրիլ իրենց ընկերներուն մէջ ու անոնց համար, կուսակցութեան համար, ազգին համար:

Փոքր տարիքէն Հ. Թ. Դաշնակցութեան անդամակցելով, մեր Սերժիկը կը լրացնէր տիպար կուսակցականի մը գլխաւոր յատկանիշները: Կարգապահ, զաղտնապահ, իր պարտաւորութիւններուն եւ պարտականութիւններուն գիտակից, ընկ. Սերժ գիտցաւ իր ԵՍԸ գոհել յանուն հաւաքականին, յանուն գերագոյնին:

Տիպար կուսակցական մը ըլլալու իր հանգամանքին կողքին, ան նաեւ օրինակելի մարդ էր, մարդ բաւրի ընկերասիրութեան լայն իմաստով: Բոլորին հետ բնականօրէն, բոլորէն սիրուած, ան երբեք չէր շահագործեր այդ բարեկամութիւնը եւ սէրը: Համեստութիւնը, ծառայասիրութիւնը, քիչով գոհանալն ու գնահատութիւն չգիշերողութիւնը իր կեանքին ուղին դարձուցած էր, եւ անգիշերող կը մնար այդ ուղիին վրայ:

Հաւանաբար այս տողերը վերաւորանք մը նկատուէին մեր սիրելի ընկերոջ կողմէ: Վստահաբար, Սեր-

Րնկ. Սերժ կ'ընտրէր նահատակութեան ուղին եւ իր գիտակից մահով կը միանար անմահներու փաղանգին: Լիբանանահայութեան ինքնապաշտպանութեան նուիրական պարտականութեան ու պատիւին սիրալոյսով ընդառաջած անձնուէրներուն շարքերը կը խտանար նոր մարտիրոսի մը ոգեղէն ներկայութեամբ, որ քրիստափորներու բազմախորհուրդ աւանդին ունկնդիր՝ սերնդակիցներուն ու զաւրթ սերունդներուն համար կ'ըլլար նոր դաս ու վերանորոգ աւանդ:

Ինքնանուիրումը գերագոյն ուխտի վերածած սառնասիրտ յեղափոխականի արի՛, ազնի՛ւ եւ տարօրէն ոգեղնա՛ղ պատգամ:

Պատգամ՝ որ իր նահատակութենէն ուղիղ քսանհինգ տարի ետք, այսօր նաեւ կը հնչէ նո՛յն ուժգնութեամբ, միեւնոյն գրաւչութեամբ եւ դաշնակցական անձնագոհութեան արնահիւս, այլ համբուրելի կարմիր դրօշին տակ կը խմբէ նորանոր գաղափարապաշտներ:

Փա՛ռք ու պատիւ փառաց պսակը արժանաբար նուաճած անմահներուն յաւերժական ներկայութեան:

Հ. Յ. Դ. ԱՂԲԱԼԵԱՆ ԿՈՄԻՏԵ

Ժիկ, դաշնակցականի իր գիտակցութեամբ, պիտի մերժէր որ իր գործին եւ աշխատանքին մասին խօսւի, ժողովուրդը լսէ, իր բարեկամները լսեն:

Աւելին՝ վստահաբար, եթէ իր կարելիութիւններու մէջ ըլլար, ընկ. Սերժ պիտի մերժէր մահը, այսօրինակ մահը: Իրեն համար մեծագոյն վախը, մեռնիլն էր անհեթեթ կերպով: Մեռնիլ, վասն ոչինչի: Ինչքան հեզնոյ է մահը, երբ կու գայ անժամանակ, աննպատակ:

Սակայն, մահուան հեզանքը, այդ ուումը կտորը, կրցան միայն հեռացնել անգմէ ընկ. Սերժին մարմինը, բայց երբեք հոգին, միտքը, ժպիտը:

Բոլոր անոնք, որոնք քալեցին ընկերոջ դագաղին ետեւէն, եւ բոլոր անոնք, որոնք անոր հետեւեցան իրենց մտքով, հեռուէն, մէկ խօսքով բոլոր երիտասարդութիւնը, բոլորը՝ որոնք գինք ճանչցան, վստահօրէն չեն կրնար մոռնալ գինք:

Ընկ. Սերժին մահը երբեք չի կրնար մեզ յուսահատութեան մատնել: Մեզմէ հեռու պարտաւորական ամէն տրամադրութիւն:

Ընկ. Սերժ Թովմասեանի մահը ուխտ մըն է ամբողջ երիտասարդութեան, իւրաքանչիւր դաշնակցականի, հաւատարիմ մնալու անսակարկ ծառայութեան կեանքի նոյն ուղիին:

Սերժի՛ ընկեր,

Թող ոսկորներդ հանգիստ հանգչին հողին տակ, Թող հոգիդ չփոթորկի, որովհետեւ, կայ սերունդ մը, ուխտեալ սերունդ մը, որ վերցուցած է դաշնակցական անձնագոհութեան դրօշը, կը քալէ նոյն ճամբէն, եւ ունի նոյն մճռակամութիւնը:

ԵՐԻՏԱՍԱՐԳԱԿԱՆ

(1976)

Կարեւորը, թերեւս յօդուածի գոյութիւնը կամ չգոյութիւնը չէ՛, այլ՝ կարեւորը «քաղաքացիութիւն», «մարդասէր» եւ «մարդկային իրաւանց պաշտպան» պետութիւնների բռնած դիրքն է անիրաւուած մի ազգի՝ հայութեան նկատմամբ:

Եւ, դժբախտաբար, պատմութիւնը մոռացութեան տուած եւ քաղաքականութեամբ փչացած թուրքին հետեւող այդ պետութեանց շարքում տեսնում են այնպիսիները, որոնց ազատութեան եւ անկախութեան համար հայը չի խնայել նոյնիսկ իր արիւնքը:

Լինքընի Միացեալ Նահանգները, «ազատութիւն, եղբայրութիւն եւ հաւասարութիւն» աղաղակող Յարանան, Կարիպալտի իտալիան, Կանտիի Հնդկաստանը, Սաթթիւր իսրայիլ եւ Եփրեմ իսրայիլ իրանը եւ տակաւին Փաքիստանը, Իրաքը, Ռուսաստանը, Աւստրիան, Նիճերլանդ եւ Էքուատոր - ահա՛ այն բոլոր պետութիւնները, որոնք ընդառաջեցին Թուրքիայի պահանջին:

30րդ յօդուածը նոյնանման յօդուածներին առաջինը չէ՛ եւ վերջինն էլ պիտի չլինի, անտարակոյս:

Միջազգային դիւանագիտութիւնը չէ՛, որ պէտք է ապահովէ հայութեան ազգային իրաւունքները - այս էլ վեր է կասկածից:

Եւ, իբրեւ հետեւանք վերոյիշեալ իրողութիւններին, պէտք է գիտակցենք, որ անհրաժեշտ է կազմակերպուել ազգովին քաղաքական հասունութեամբ, անհրաժեշտ է զօրացնել մեր մէջ քաղաքական դատունեանը գիտակցութիւնը, եւ այն ժամանակ գիտակցելով այս բոլորին, կը դառնանք ներքու, կ'ունենանք այդ արդար դատի հետապնդման կամքն ու պատրաստակամութիւնը, որոնք կը ստեղծեն քաղաքական, տնտեսական, մշակութային, քարոզչական, գիտական եւ այլ այն բոլոր միջոցները, որոնցմով կը կարողանանք յարատեւել, յաղթահարել անյաղթահարելի դժուարութիւնները, ստանալ մեր ազգային իրաւունքները, ամբողջական Հայաստանը, ազատութիւն եւ անկախութիւնը:

Այս իրողութիւններն են ահա, որոնց, ինչպէս ասւեց, վերջին տասնամեակի ընթացքին, սկսել է գիտակցել հայութիւնը:

Իսկ այդ գիտակցութեան զարգացման եւ յարատեւման համար, մէկ կողմ պէտք է նետել դարերի ընթացքին մեր հոգիներում կուսակուած ստրկային հոգեբանութիւնը, պէտք է համախմբել բոլոր ուժերը եւ կազմակերպել, յարձակողական եւ պահանջատէր հոգեբանութիւն պէտք է ստանալ եւ ո՛չ աղաչող, պէտք է սպառնալ եւ իրագործել սպառնալիքը կարելիութեանց բոլոր միջոցներով՝ քաղաքական, տնտեսական, քարոզչական, մշակութային, գիտական եւ այլն, որովհետեւ յստակ է արդէն ամէն մէկ հայի համար, որ քաղաքական անտառի մէջ առանց ուժի իրաւունք չկայ:

Ս. ԹՈՎՄԱՍԵԱՆ

ՍԵՐՇԻ

* * *



«Շատ գէշ գիշեր», «Երեք ժամ» կոյր ուժբակոծում», «Տան ետեւի երկու ուումբերը. Ֆ.ը՝ վիրաւոր», «Գիշերը՝ ահաւոր պայթում ձեմարանի գիմաց, Ս.ենց տան տակը», «Դարմաստան կողքի ուումբը. Ե.ը՝ վիրաւոր բարբախտաբար թեթեւ», «Երկու ուումբ ձեմարանի ծաւերուն վրայ, երկու հատ ալ քո՜վի փողոցը. Մ. ի.ենց արտաքին պատք քանգը՝ ւած, բարբախտաբար ոչ մէկ մարդկային վնաս», «Գիտական ամփիթատորին ուումբը, տանիք՝ ու ներսը՝ քաւրուքանդ», «Ժամը 14:00ին՝ ուումբ ձեմարանի բակին մէջ, մեր stationին ճիշդ վրան, Գ. Ե. Տ. Մ. վիրաւոր», «Շատ գէշ գիշեր, անընդհատ ումբակոծում»...

Տանթէկուն տեսարաններու երեւակայածին շարք մը չէ, այլ հապահապ ու հատուկտոր նոթեր, յանձնուած ձեմարանի գրասեղանիս agendaին էջերուն, եւ որոնք կը յաւանքին 1976 Մարտ-Հոկտեմբեր միտարաններու մեր աւօրեան ներկայացնել: Աւօրեայ մը, որ շատ թարմ է տակաւին՝ ամբողջական եւ աւարկայական պատկերացման մը համար: Մնաց որ նման փորձ մը անգամ, եթէ ոչ աւելորդ,

առնուած ինքնահաւաս է հաւանաբար՝ հակառակ կացութեան զգալի բարելաման: Աւօրեայ մը, յամենայն դէպս, որ սարսանընդհատ ընթացքի կողքին, մեզի տուաւ նաեւ այլ ապրումներ, հոգեկան բաւարարութեան եւ հպարտանքի զգացումներ, շնորհիւ մեր տղոց գիտակից ու արի կեցածքին, անսակարկ նուիրումին, կարգապահութեան, քաղութեան:

Նիւթական վնասները դարմանուած են կամ կը դարմանուին: Վէճերը բուժուած են կամ կը բուժուին: Սարսափի պահերը մոռցուած են մնայ հպարտութիւն վերաւորութիւնները: Կը լինի մեր լաւ տղոց աղուրդ կեցածքները:

Բայց նաեւ՝ յամենցողաւորութիւնն ու դարման չուեցող ափսոսանքը լաւ տղոց կորուստներն:

Կը մնայ, զրասեղանիս նոթատետրին Կիրակի 28 Մարտի էջին վրայ, սրտին վրայ իր հարազատներուն եւ բոլոր, բոլոր ընկերներուն՝

«Սերժի եղբրական մահը»:

Սերժ, Սերժիկ, բուն անունով Սարգիս Թովմասեան: Անթիլիասի մէջ, ուումբի պայթումի հետեւանքով դառնաղէտ մահը «Պարսկաստանի խորքից» եկած այս տղուն կուրօքն նախապարտադիր ճակատագրի մը աննախատեսելի տնօրինումը չէր սակայն, այլ գիտակցօքն ընտրութեամբ եւ ամբողջական նուիրումով պաշտուած գաղափարական ուղիի մը անողոք կերպով տրամաբանական վերջակէտը: Եւ այս՝ անկախ տակաւին գերագոյն այն միտքին, քիչերու միայն տուած՝ գերընկան բայց գիտակցական այն մղումէն, զոր ունեցած է վերջնագոյն պահուն՝ կ'ըսեն՝ եղեւնական տեւի փողոցը. Մ. ի.ենց արտաքին պատք քանգը՝ ւած, բարբախտաբար ոչ մէկ մարդկային վնաս», «Գիտական ամփիթատորին ուումբը, տանիք՝ ու ներսը՝ քաւրուքանդ», «Ժամը 14:00ին՝ ուումբ ձեմարանի բակին մէջ, մեր stationին ճիշդ վրան, Գ. Ե. Տ. Մ. վիրաւոր», «Շատ գէշ գիշեր, անընդհատ ումբակոծում»...

Ջինուոր, Դաշնակցութեան զինուոր: Ջինուոր ու ղեկավար միանգամայն: Պատասխանատու մարմինը մը անդամ՝ հայութեան պաշտպանութեան առաջին գիծերուն վրայ էր նաեւ, իսկանելի գիշերը ցերեկին, փութալով հոն՝ ուր կարիք կար, մարզելով, քացատրելով, պահանջելով կուսակցական անտեղիտալի կարգապահութիւն, բարոյական ամբակուռ սկզբունքներ, եւ ամբողջական ինքնանը-

ւիրումի ոգեղէն թուիչը ներշնչելով իր երիտասարդ, թէ՛ ոչ-երիտասարդ ընկերներուն՝ իր անձնական օրինակով իսկ: Սերժը, պիտի գարմանային շատեր, ա՛յն կողքին, որ ձեմարանի մէջ արիւններու դասաւորութեամբ կը զբաղէր կամ նամակ կը մեքենադրէր, վերջին աստիճանի քաղաքական, կիրթ ու քիչ մը անչկոտ այդ մանուրկութեան, կարգապահութեան, քաղութեան: Նիւթական վնասները դարմանուած են կամ կը դարմանուին: Վէճերը բուժուած են կամ կը բուժուին: Սարսափի պահերը մոռցուած են մնայ հպարտութիւն վերաւորութիւնները: Կը լինի մեր լաւ տղոց աղուրդ կեցածքները:

Բայց նաեւ՝ յամենցողաւորութիւնն ու դարման չուեցող ափսոսանքը լաւ տղոց կորուստներն:

Կը մնայ, զրասեղանիս նոթատետրին Կիրակի 28 Մարտի էջին վրայ, սրտին վրայ իր հարազատներուն եւ բոլոր, բոլոր ընկերներուն՝

«Սերժի եղբրական մահը»:

Թիւնը, ոչ ալ սա պահուս հնարաւորութիւնը ունիմ հետաքրքրութիւն, փնտրելու: Յեղափոխական մեր ո՛ր գործիչին կենսագրութեան լրիւ ծանօթ ենք, որ կարեւորութիւն ընծայած ըլլալինք մեր նուիրեալ, բայց տակաւին երիտասարդ ընկերոջ ծննդեան թուականին, ծննդավայրի, մանկութեան ու պատանկութեան վերաբերեալ մանրամասնութիւններուն, նոյնիսկ պաշտօնակցութեան եւ ամուսնանկցութեան ծառայութեան մանալէ, հարազատներու դառնալէ ետք: Եւ ի՞նչ փոյթ: Սեղի համար հիմնականը արդէն իսկ բոլորած, եւ քաջածանօթ արդիական ռազմագիտութեան միջոցներուն ու մեթոտներուն, Պարսկաստանի մեր մարմիններուն կողմէ Պէյրութի ղրկուեցաւ ասկէ մօտ ի՞նք թարիներ առաջ, Հ. Յ. Դ. կուսակցական դպրոցի դասընթացներուն հետեւելու համար: Հետեւեցաւ, աւարտեց, ու մնաց Լիբանան՝ ազգային եւ ընկերական շրջանակին կարճ ժամանակի մէջ իսկապէս կապուած ըլլալու եւ կուսակցական պարտականութեան կրկնակ բերումով: Հետաքրքիր միտք, հայ ամէն կարգի արթնընդուն խնկարկու եւ չապէս աշխատունակ տարր՝ Սերժիկը հետեւեցաւ նաեւ St. Joseph համալսարանի Արեւելեան Դպրոցի Դաշնակցութեան ճիւղին: Եւ, որքան ալ իրեքամբեր թուին սա երկու կողմերը, ան եղաւ

սքանչելի archiviste՝ ճեմարանէն ներս, դուրսի կեանքին մէջ կարճ ժամանակէն դառնալով կուսակցական այն աշխուժ ու բոլորաշնուէր activiste - բառին ամենալայն առումով - գործանշան, գնահատեցին ու սիրեցին իր դաշնակցական ընկերները: Շատերուն համար թերեւս տարօրինակ կամ քիչ մը չափազանցուած թուի եթէ ըսեմ, բայց կ'ըսեմ որ միշտ յարգալիք ու ժպտուն կը բարեւէր բոթովմասեանը, այո՛: Եւ բուժուած են կամ կը բուժուին: Սարսափի պահերը մոռցուած են մնայ հպարտութիւն վերաւորութիւնները: Կը լինի մեր լաւ տղոց աղուրդ կեցածքները:

Բայց նաեւ՝ յամենցողաւորութիւնն ու դարման չուեցող ափսոսանքը լաւ տղոց կորուստներն:

Կը մնայ, զրասեղանիս նոթատետրին Կիրակի 28 Մարտի էջին վրայ, սրտին վրայ իր հարազատներուն եւ բոլոր, բոլոր ընկերներուն՝

«Սերժի եղբրական մահը»:

Սիրեց ալ. ու ամուսնացաւ՝ գաղափարակից ընկերուհի մը հետ: Կազմեց ընտանեկան ջերմիկ բոյն մը, որուն գաղա-

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ

Հ. Յ. Դ. «ԱՂԲԱԼԵԱՆ» ԿՈՄԻՏԵԻ

ՅՈՒՇ ԵՐԵԿՈՅ

Նուիրում՝

ԸՆԿ. ՍԵՐՇԻ ԹՈՎՄԱՍԵԱՆԻ

ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ 25 ԱՄԵԱԿԻՆ

Տեղի կ'ունենայ այսօր՝ Դիմզաբքի, 8 Նոյեմբեր 2001, երեկոյեան ժամը 8:30ին, «Յ. Տեր Մելքոնեան» հանդիսարանին մէջ:

ԵՐԱԽԵՐ

փարական մթնոլորտը ոչինչով անընական կը դարձընէր, կեանքի իր ընկերուհիին համար, Սերժին գրեթէ ամէնօրեայ ուշացումներն ու պարագայական բացակայութիւնները՝ ժողովի, դասախօսութեան, կազմակերպական շախմատներն երու թէ կուսակցական այլ պարտականութեանց բերումով։ Դաշնակցական գոյգերուն յատուկ անցադղի ձեւ մը կայ, զոր ոչ ոքուսակցականներ զժուար թէ հակնան կամ ընդունին։ Եւ երբ 1975ի վերջին միխաներուն Սերժի ակումբէ ակումբ կը փութար իր պարտականութեանց եւ պատասխանատուութեանց ճամբուն վրայ, ան գիտէ՝ րարդէն, որ իր Արամիկը պիտի գար (ու «Նախաւսնամուռած» էր անուունը առջինեկ զաւկին, Սերժի եւ Տիգրանուհիի պաշտած հերոսի)՝ Արամի անուունով)։ Ափսոս. ու հոս է, որ պարտականութեան ճամբուն վրայ գոհուած մեր թանկագին ընկերոջ անժամանակ մահը - յեղափոխական մարդուն համար ոչ այնքան հազուադէպ, այլ հասկնալի՝ երեսութմարդկային տեսակէտէ աղբիարշ ողբերգութեան մը կը վերածուի։ Արամիկը ծնաւ, բայց Սերժը չկա՛ր արդէն։

Դաշնակցական էր Սերժ, բառին բովանդակ եւ ամէնէն բովանդակւից իմաստովը։ Անչեղօրէն կարգապահ՝ իբրեւ զինուոր, եւ բծախնդրօրէն՝ խստապահանջ՝ իրրեն վարիչ կամ պատասխանատու ընկեր։ Կուսակցական որոշումներու անվրէպ գործադրութիւնը խառնուածքի պարտադրանք էր իրեն համար, եւ իր մօտ՝ անտեղիւտի պահանջի կը վերածուէր իր պատանիներուն, իր ղեկավարած երիտասարդներուն կամ մարտական ներքին խստականութեամբ տառկանչուող նկարագիր մըն էր իբր, որ կազմակերպութեան մարդը բնորոշող կանոնագրային - կարգապահական ամէնէն ամրակուռ ըմբռնումներուն կողքին, իր մէջ կը միաձուգողափարական մարդու եւ յեղափոխական գործօն շրջանի խստականութեամբ տառկանչուող նկարագիր մըն էր իբր՝ Հ. Գ. Դաշնակցութեան գաղափարի ու գործի տաճարին։ Եւ տառաւիժ՝ խիզախ էր, ու վտանգին դիմաց իրապէ՛ս սառնաւորտ ու արամսբանդարէր էր, բայց երբեք արտայայտուող ու պոռոտախօս։ Այլ համէստ մանաւնդ, ծայրայեղօրէն համեստ, ամէկոտ ըլլալու չափ քաշուող, ընդհանրապէս անխօս։ Զուգահե՛տ՝ իր օրինակելի, քիչ մըն ալ առածի կարգանցած՝ գաղտնապահուութիւնը։

Լուռ ուժականութիւն մը։

Համեստ այնքան՝ որ, վստահ եմ, եթէ տրուէր իրեն սա պահանջ յաւիտենական իր ներշնչն արթննալ ու այս տողերը կարդալ, Սերժիկի անո՛ւշ հոգին պիտի վրդովուէր՝ դաշնակցական բարոյա-

կանի իր հիմնական ըմբռնումներուն մէջ վիբաւորուած՝ զգալով։ Թոյլատրելի՞ ք հայքան գովասանք։ Դաշնակցական ե՛նք, թէ չենք։ Ու ինք, անձայն պիտի կարմրէր։

Մերելի՛ Սերժ, թոյլ տուր, որ օգտուիմ սա-կայն մեր այլ մէկ աւանդութենէն - այն՝ որ կենդանի ու գործող դաշնակցականի գովքը չեն հուսեր, այո՛, բայց նա-հատակ դաշնակցականի արժանիքները կը թուեն, կը մատնանչեն՝ առանց չափազանցութեան, վերառնելով մանաւանդ դաշնակցականութեան բարոյական պարունակին մէջ ինկող խառնըւածքային յատկայացները անոր, իբրեւ ներշնչաբան նոր ու գալիք սերունդներուն համար։ Թոյլ տուր որ ամբամբ-ւան մը համար միայն, պարպեմ սիրտս, քու մասիդ ըսելու համար բաներ՝ զորս մտածած եմ միշտ, իրականութիւններ՝ իմ ներքին ամենաուժեղ համոզումով, բայց չեմ ըսած տակաւին, անժամանակ ու դժուար դարմանելի կորուստէդ ետք այլ լման տարի մը։

Սերժ, երբ «Ո՛վ է՞ դաշնակցականը» կը գրէի, ու անոր երրորդ մասին՝ դաշնակցականի բարոյականի տիպարին կապկցաբար ներքնապէս հարց կու տայի ես ինծի, թէ ներկայիս մեզմէ արդեօք ո՞վ կամ որո՞նք ամէնէն աւելի կը մօտենան ամբողջական այդ տի-պարին, մեր ուրիշ կարգ մը անո՛ւշ տղոց չարքին, ու յաճախ առաջին մակարդակի վրայ, քե՛զ է որ կը մտապատկերէի։

Պայմաններու բերու-մով մօտէն հետեւեցայ դաշնակցական երիտասարդի կարծեան, բայց խիտ կեանքիդ ու հաստատեցի՝ որ «Դաշնակցութիւնը գործի կուսակցութիւն է» կամ «Դաշնակցականին» համար չկան մեծ ու փոքր գործեր»։ Ռոտտոմեան աւանդները անհետացած չքեղ սերունդի մը բնաբանը չեն կազմած միայն, այլ կրնան նոյնքան իրաւ ու նոյնքան բեղմնաւոր ըլլալ նաեւ մեր նորերուն մօտ, երբ անհրաժեշտ հաւատքն թէ դաստիարակութիւնը ունենան անոնք։

Գիտակից թէ ենթագիտակից մղումով մը կեանք գաղափարական կենցաղիդ մէջ ռոտտոմեան այդ աւանդին հաւատարիմ հետեւողը ըլլալէ ետք, գիտակցօրէն թէ ենթագիտակցօրէն փնտռեցի՞ր արդեօք, Սե՛րժ, քրիստափորեան տիպի այդ քաղ, ինքնուտիւքեան թերեւս անիմաստ, բայց սերո՛ւնդ ներշնչելու եւ մա՛րդ կերտելու իր ներգործուն կարողութեամբ չքեղօրէն իմաստաւորուող վախճանը։

Հետեւեցայ կեանքիդ, գէթ անոր վերջին, ամենաբեղուն ութ տարինե-րուն բայց, լիբասանեան պատերազմի անիծուած պայմաններուն բերու-մով, չկրցայ հետեւիլ դա-նին մէջ, իբրեւ ընկերա-կա՛ն վերջին պարտակա-նութիւն։ Մահէդ տարի մը ետք, մի՛շտ կենդանի էութեանդ մտերմութեան մէջ, յուզումով թուողթին յանձնուած սա քանի մը տողերը թող ըլլաւ այդ բուռ մը հողը քեզի, ին-ծի, մեր բոլորին համար - էակ թէ ոգեղինացած էութիւն - աւելի լաւ, աւելի պայծառ օրերու սպասումով։ Ու հաւատ-քով։

ՀՐԱՉ

ՏԱՍՆԱՊԵՏԱՆ

(28 Մարտ 1977)
(Հատուած)

ՀԱՅՈՑ ԵՐԹԻ ԶԱՀԱԿԻՐԸ

Ամէն աշնան շրջա-նում ընդունուած է, որ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան մեծ ըն-տանիքը կատարի կու-սակցութեան աւանդա-կան օրուան տօնակա-տարութիւն։ Անդրա-դառնալով կուսակցու-թեան անցեալին՝ այս մի-ջոցառումների առիթն օգտագործոււմ է արածի իւրատեսակ հայուե-տուութիւնը ներկայաց-նելու եւ գալիքի մէջ անե-լիքները ճշդելու նպա-տակով։ Այս օրը նաեւ հայութեան կեանքում առկայ մտահոգութիւն-ներից խօսելու օր է, քա-նի որ Դաշնակցութիւնն իր գործունէութեամբ երեք չի կարող այդ մտահոգութիւններից որպէս Հ. Թ. Դ. Հայաստանի Գերագոյն Մարմինի որոշմամբ, այս տարուան տօնակատա-րութիւնները պէտք է ոչ թէ կենտրոնացուէին մայրաքաղաքում, այլ անցկացուէին նաեւ մար-գերում՝ մէկ ամբողջա-կան ծրագրով, բայց առանձին միջոցառում-ների ձեւով։ Սա առիթ էր ընձեռել Գերագոյն Մար-մինի, Ազգային ժողովի Ժ. Թ. Դ. խմբակցութեան, ինչպէս եւ մտաւորա-կան ընկերներին մէկ ան-գամ եւս լինելու շրջան-ներում, չփուելու ոչ միայն կուսակցական կառույցի, այլեւ ժողովրդ-ի հետ, անցկացնելու կարգապահական ու ժո-ղովրդային հանդիպուե-ններ։ Այս տարուան տօ-նակատարութիւնների ծառայելու համար եւ երբեք որեւէ բան կու-սակցութիւնից չեն անը-րապէս լինելու էին երդ-ման արարողութիւննե-րը, որոնց ընթացքում Հ. Թ. Դ-ին պէտք է անդա-մագրուէր աւելի քան 300 նորագէտ։

Արժէ թերեւս շեշտել, որ մինչ անդամագրու-թիւնը անցել է դիմորդնե-րի նախապատրաստման ու ընտրութեան երկար ժամանակահատուած, եւ դաշնակցական անդա-մագրութիւնը պարզ ցու-ցակագրում չէ։ Դաշնակ-ցութեան շարքեր չեն ըն-դունւում կուսակցու-թեան առաջիկայ գործե-րում պէտք գալու եւ այդ գործերից յետոյ մոռաց-ւելու համար։ Երդման երարողութեամբ կու-սակցական տան նոր ան-դամը ձեռք է բերում մտնտիրոջ լիկրաւ իրա-ւունքներ՝ հաւասար պարտականութիւնների հետ միասին։ Այս իսկ պատճառով Դաշնակցու-թիւնը խիստ բծախնդրօ-րէն է մօտենում խնդրին եւ չի պարծենում, թէ իր անդամների ցուցակները տասնեակ հազարաւոր կուսիւններ են ընդգըր-կում։ Նոյն այս մօտեցու-մը նպաստում է, որ քա-ղաքական եւ այլ յանձ-նառութիւնների ժամա-նակ դաշնակցականների աշխատանքը բազմապա-տիկ տքնաջան ու արդիւ-նաւէտ լինի, ինչն էլ կու-սակցութեան սկզբունք-ների խորթ անձանց եր-րեմն մտածել է տալիս, թէ պատճառը ծախսուող ինչ-ինչ աստղաբաշխ-կան գումարներն են, որոնց, անկեղծ ասած՝ թէկուզ չնչին տոկոսն ունենալու դէպքում, վստահ ենք՝ Դաշնակցու-թեան գործունէութիւնը բազմապատիկ աշխուժ պիտի լինէր։ Միւս կող-մից, թէեւ Դաշնակցու-

թիւնն առաւել ներպա-րակայնօրէն հրապա-ցող կուսակցութիւննե-րից է, սակայն կայ մտայ-նութիւն նրա ներփակ լի-

նելու, «սարսափելի» եր-դումներ ու խոստումներ տալու մասին։ Սա հիմ-նաւորում է նրանով, որ երդուեալ դաշնակցակա-նի կարգապահութիւնը, նուիրումը մեր շուրջը եղած օրինակների հետ անհամատեղի է։ Իրա-կանութիւնն այն է, որ՝ 1.- հայ մարդուն Դաշ-նակցութիւն բերում է ոչ թէ օրախնդիր նպատա-տուութիւնը ներկայաց-նելու եւ գալիքի մէջ անե-լիքները ճշդելու նպա-տակով։ Այս օրը նաեւ հայութեան կեանքում են ոչ անհատ կուռքերի հեղինակութիւնն մի օր կարող են սասանուել կամ խամրել նոր հեղինա-կութիւնների հետ մրցակցութեան մէջ։ Դաշնակցականը՝ որպէս կազմակերպութեան ներ-կայացուցիչ, կախման մէջ չէ ոեւէ դաշնակցա-կանից, այլ միայն կազ-մակերպական կանոն-ներն ու ծրագրային գա-ղափարներն են որոշում նրա փոխարաբերու-թիւնների կերպը, 3.- դաշնակցականները չեն համախմբում շահերի շուրջ, այդ իսկ պատճա-ռով նրանց չի սպառնում եղած, նոր, աւելի մեծ ու աւելի փոքր շահերի հա-մար երբեւէ ներկուսակ-ցական զգվուտցի մէջ մտնելու վտանգը, դաշ-նակցականները կուսակ-ցութիւն են գալիս վերջի-նիս միջոցով՝ հայ ժո-ղովրդի հաւաքական շա-հերին ու նպատակներին ծառայելու համար եւ երբեք որեւէ բան կու-սակցութիւնից չեն անը-կալում, նոյնիսկ շնոր-հակալութիւն՝ ամենա-մեծ գոհաբերութեան դի-մաց։ Դաշնակցութեանը օտար է այն «չուկայա-կան» երեւոյթը, երբ ոե-ւէ մէկը կարող է ասել, օրինակ, «արիւն եմ թա-թիւնդ անցել է դիմորդնե-րի նախապատրաստման ու ընտրութեան երկար ժամանակահատուած, եւ դաշնակցական անդա-մագրութիւնը պարզ ցու-ցակագրում չէ։ Դաշնակ-ցութեան շարքեր չեն ըն-դունւում կուսակցու-թեան առաջիկայ գործե-րում պէտք գալու եւ այդ գործերից յետոյ մոռաց-ւելու համար։ Երդման երարողութեամբ կու-սակցական տան նոր ան-դամը ձեռք է բերում մտնտիրոջ լիկրաւ իրա-ւունքներ՝ հաւասար պարտականութիւնների հետ միասին։ Այս իսկ պատճառով Դաշնակցու-թիւնը խիստ բծախնդրօ-րէն է մօտենում խնդրին եւ չի պարծենում, թէ իր անդամների ցուցակները տասնեակ հազարաւոր կուսիւններ են ընդգըր-կում։ Նոյն այս մօտեցու-մը նպաստում է, որ քա-ղաքական եւ այլ յանձ-նառութիւնների ժամա-նակ դաշնակցականների աշխատանքը բազմապա-տիկ տքնաջան ու արդիւ-նաւէտ լինի, ինչն էլ կու-սակցութեան սկզբունք-ների խորթ անձանց եր-րեմն մտածել է տալիս, թէ պատճառը ծախսուող ինչ-ինչ աստղաբաշխ-կան գումարներն են, որոնց, անկեղծ ասած՝ թէկուզ չնչին տոկոսն ունենալու դէպքում, վստահ ենք՝ Դաշնակցու-թեան գործունէութիւնը բազմապատիկ աշխուժ պիտի լինէր։ Միւս կող-մից, թէեւ Դաշնակցու-

թազատութիւն իր ու իր նախորդների յիշողու-թեան, ներկայի մօտե-ցումների եւ ապագայի իդձերի հանդէպ։ Այ-սինքն՝ դաշնակցական գաղափարախօսութիւնը սկզբնապէս, մինչ կու-սակցութիւն գալը դաշ-նակցական մտածողու-թիւն է, հետեւաբար՝ ան-կեղծ, անշահախնդիր դաշնակցականը երբեք չի կարող դաւաճանել կու-սակցական գաղափարա-խօսութեանը, այսինքն՝ հէնց կուսակցութեանը, որովհետեւ դա կը նշա-նակի դաւաճանել ինքզ-եզդ։ Իսկ ինչ է՞ դաշնակ-ցական գաղափարախօ-սութիւնը։ Այն արտա-յայտութիւնն է մեր ժո-ղովրդի իղձերի, որոնք մինչեւ կուսակցական տեսութիւն դառնալը արդէն իսկ արծարծուել ու հրապարակ էին բեր-ւել մեր ազգային մեծ մտաւորականների՝ Արովեանի, Պատկանեա-նի, Նալբանդեանի, Մկրտիչ խրիմեանի ու կատապէս ԲաՖՖու-կողմից։ Դաշնակցու-թեան գաղափարախօսա-կան նպատակների սահ-մանումը ներկայացնում է ազգային-ազատագրա-կան շարժման երեւելի գործիչ, Առաջին Հանրա-պետութեան ռազմական նախարար, ականաւոր դաշնակցական Ռուբէն Տէր Միխսեանը՝

1.- հայութեան պահ-պանում, 2.- Հայաստանը հա-յուրեանը, 3.- ուժ եւ կազմակեր-պութիւն, 4.- արդար աշխա-տանք։ Այս նպատակներն են, որ պայմանաւորում են Դաշնակցութեան թէ՛ յե-ղափոխականութիւնը, թէ՛ ընկերակցական դա-ւանանքը եւ թէ նրա ազ-գային էութիւնը։ Դաշ-նակցութիւնը համարում է, որ այս խնդիրների լուծմամբ միայն հայ ժո-ղովուրդը կը հասնի իր իղձերի իրականացմանը, կ'ունենայ ազատ, ար-դար եւ բարգաւաճող Հայքները։

Շատ ժամանակ է ան-ցել այն օրից, երբ Դաշ-նակցութիւնը յիշեալ գա-ղափարների շուրջ կա-ռուցել է իր ծրագիրը։ Սակայն ի՞նչպէս է, որ այսօր՝ 111 տարի անց, Հ. Թ. Դ. նարդարեւ կու՛մ լինել ամենատարած-ւած, ամենակազմա-կերպուած, ամենատմուր-բաղաքական կազմակեր-պութիւնը։ Պատասխանը ակնյայտ է՝ 111 տարի անց էլ չեն փոխուել հա-յութեան առջեւ ծառա-ցած խնդիրները, հետե-ւաբար, չեն կարող փոխ-ւել նաեւ ժողովրդի հա-ւաքական ազգային նպատակները։

2001 թուականի Նո-յեմբերի 1ին եւս աւելի քան 300 հայրենասէր, ազգային կեանքով մտա-մագրուեցին Դաշնակ-ցութեան տուրը ընտանի-քին։ Ցանկանանք, որ նրանք նաեւ իրենց ջան-քերի գնով իրականաց-ւած տեսնեն հայու-թեան մեծ նպատակները, որոնք 111 տարի է արդէն երթի մէջ են, եւ այդ եր-թի ճամբան հարթողների մէջ է կրկին հայ ժողովրդ-ի Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը։

ԱՐՏԱՇԵՍ

ՇԱՀԱՋԱԵԱՆ

«Նրկիր»

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԸԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՐԶԵՐՈՒՆ ՄԷՋ

ԱՒԵԼԻ ՔԱՆ 300

ՆՈՐԱԳԻՐՆԵՐ ԿԸ ՄԻԱՆԱՆ

Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՇԱՐՔԵՐՈՒՆ

1 Նոյեմբերին Հայաստանի զանազան մարզերուն մէջ տեղի ունեցած են Դաշնակցութեան օրուան տօ-նակատարութիւններ, որոնց ընթացքին աւելի քան 300 նորագիրներ մուտք գործած են Հ. Թ. Դաշնակ-ցութեան շարքերը։ Ստորեւ կը ներկայացնենք Հա-յաստանի զխաւոր մարզերուն մէջ տեղի ունեցած տօնակատարութիւններուն ընթացքին կատարուած երդման արարողութիւններուն ընդհանուր պատկերը։

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

Գեղարքունիքի մարզին մէջ 48 հոգի երդում տուին եւ զինուորագրուեցան Հայ Յեղափոխական Դաշ-նակցութեան։ Երդման արարողութիւնները տեղի ու-նեցան Վարդենիսի եւ Մարտունիի մէջ, իսկ կնքահայ-րը Հ. Թ. Դ. Հայաստանի Հայ Դատի գրասենեակի տնօրէն եւ Միւնիխի հայկական հարցերու հաստա-տութեան տնօրէն էտուարտ Յովհաննիսեանն էր։

Երդման արարողութենէն ետք նորագիրներու հարցումներուն պատասխանեց եւ յառաջիկային կա-տարուելիք աշխատանքի կարեւորութեան ու անհրա-ժեշտութեան մասին խօսեցաւ Հ. Թ. Դ. Հայաստանի Գերագոյն Մարմինի անդամ Հրաչ Թադեւոսեան։

ԱՐԱԿԱՇՈՏՆԻ ՄԱՐԶ

Արագածոտնի մարզին մէջ դաշնակցական երդման արարողութեան մասնակցեցան 20 նորագիրներ։ Երդման արարողութեան կնքահայրն էր պատգամա-ւոր Կիմ Բալայեան։

ՏԱՒՈՒՇԻ ՄԱՐԶ

Տաւուշի մարզի Նոյեմբերեանի շրջանի Ջղբեւան գիւղին մէջ տեղի ունեցաւ Հ. Թ. Դ. 111ամակի տօ-նակատարութիւն։ Օրուան զխաւոր բանախօսն էր Հայաստանի Ազգային ժողովի Հ. Թ. Դ. պատգամա-ւորական խմբակցութեան անդամ գրող Ռուբէն Յով-սէփեան, որուն կնքահայրու թեմ գրող ունեցաւ երդման արարողութիւն եւ Հ. Թ. Դ. շարքերը մուտք գործեցին տասը նորագիրներ։

Ամբողջ մարզին մէջ նոյն օրը Հ. Թ. Դ. շարքերը համալրեցին 30 նոր անդամներ։ Հին ջոջեանցիներէն երդում տուաւ եւ Հ. Թ. Դ. անդամ դարձաւ նաեւ 75ամեայ Գալուստ Ամիրաղեան, որ իր այդ տարիքին Հ. Թ. Դ. շարքերը անցնելու դրգապատճառին մասին ըսած է։ «Տակաւին հեռուոր 1946 թուականին իբրեւ դաշնակցական ձերբակալուած եւ հալածուած եմ, եւ հիմա կ'իրականանայ իմ հին երազս։ Ես մարդոց կ'ըսեմ, որ մէկ ժամէն մինչեւ 10 տարուան կեանք մնացած է ինծի, ու կեանքիս ամէն մէկ ժամը պիտի ապ-րիմ եւ պիտի գործեմ իբրեւ Դաշնակցութեան նուիրեալ»։

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

Դաշնակցութեան օրուան աւանդական տօնակա-տարութիւնը նշելու համար Արարատի մարզի Հ. Թ. Դ. ներկայացուցիչները 1 Նոյեմբերին հաւաքուած էին խոր Վիրապի մէջ, ուր նաեւ տեղի ունեցաւ մար-զի կուսակցական նորագիրներու երդման արարո-ղութիւնը։ Օրուան կնքահայրն էր Հայաստանի Ազ-գային ժողովի Հ. Թ. Դ. խմբակցութեան անդամ Մու-շեղ Միքայէլեան։

ԼՈՌԻԻ ՄԱՐԶ

Լոռիի Հ. Թ. Դ. մարզային կառույցին անդամները Դաշնակցութեան օրը նշեցին Հ. Թ. Դ. վանաձորի գրասենեակին մէջ, ուր նորագիրներու հանդիսաւոր երդման արարողութենէն զատ տեղի ունեցաւ հաւաք - ձեռնարկ մը, որուն ներկայ էին Հ. Թ. Դ. Հայաս-տանի Գերագոյն Մարմինի անդամ Վաղինակ Սարգա-եան, Հայաստանի Ազգային ժողովի պատգամաւոր Մարտուն Մաթեւոսեան, Հայաստանի նախագահի խորհրդական բանտատեղծ Ռազմիկ Դաւուդեան, Հ. Թ. Դ. Լոռիի մարզային կոմիտէի անդամներ եւ շարքա-յին անդամներ։ խօսք առաւ Ռ. Դաւուդեան, որ անդ-րադարձաւ դաշնակցական երդման էութեան։

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

Նման առաքելութեամբ Շիրակի մարզ այցելած էին նաեւ Հայաստանի Ազգային ժողովի Հ. Թ. Դ. պատ-գամաւորական խմբակցութեան անդամներ Ալվարդ Պետրոսեան եւ Արմէն Ռուստամեան։ Երդման արա-րողութեան մասնակցեցան 17 նորագիրներ։

Օգտուելով առիթն՝ Երեւանի հասած պատգա-մաւորները լուսանկարեցին Հ. Թ. Դաշնակցութեան տեսակէտները երկրին ընկերային - տնտեսական եւ ներքին քաղաքական վիճակին վերաբերեալ։

ԵՐԵՒԱՆ

Հ. Թ. Դ. Երեւանի Մարզային կոմիտէն Երգչախում-բային ընկերութեան սրահին մէջ կազմակերպած էր ձեռնարկ՝ Հ. Թ. Դաշնակցութեան 111ամակին առիթով։ Հ. Թ. Դ. Երեւանի Մարզային կոմիտէի մինչեւ վեր-Սամուէլ էփոյեան բացման խօսքին մէջ նշեց, որ Հ. Թ. Դ

Հիբամալայան Մամուլ

... ԴԻՄԱԴՐՈՒԹԻՒՆԸ ՀՈՎԱՆԱԴՐՈՐՈՂ ՊԵՏՈՒԹԻՒՆ

Լիբանան այսօր դիմադրությունը հովանաւորող պետութիւն է... Առանց ամերիկեան վարչամեքենային հետ լեզուական բանավէճի մէջ մտնելու, կը բաւէ, որ նախագահ Ճորճ Պուշ Բանայ որեւէ բառարան այդ իրականութիւնը հաստատելու համար: Այսինքն՝ կարելի է զիջիլ ահաբեկչութեան եւ դիմադրութեան միջեւ տարբերութիւնը քննարկելու օրինական իրաւունքէն: Կարելի է նաեւ նախօրօք համաձայնիլ ամերիկացիներուն ներկայացուցած բացատրութեան: Եւ զիջումէն ու համաձայնութենէն ետք յստակ պիտի դառնայ, որ «Հըզպալլա»ն դիմադրութիւն է, եւ լիբանանեան այժմու պետութիւնը, որ կը հովանաւորէ այդ դիմադրութիւնը, այդ արարքով կը կատարէ իր ամէնէն պարզ պարտաւորութիւնները:

Միացեալ Նահանգներու՝ Աֆղանիստանի դէմ շղթայազերծած ներկայ պատերազմով կը հաստատուի, որ կուսակցութիւնը դիմադրութիւն է: Այս պատերազմին պատուուակը այն է, որ ազգային հողի մը վրայ տեղի ունեցաւ յարձակում մը եւ, հետեւաբար, անհրաժեշտ է պատժել այդ յարձակումը կատարողները, սանձել զանոնք եւ դէմ կանգնիլ անոնց եւ ուրիշներու դիմաց, որպէսզի նմանօրինակ արարքներ չգործեն: Այս է նաեւ «Հըզպալլա»ի պարագան: Բոլոր չափանիշներով կարելի է հաստատել, որ ամերիկեան ուժերակոծումը կրկնակի թիւով անմեղներու մահուան պատճառ դարձաւ, քան՝ «Հըզպալլա»ի իրագործած սպանութիւնները անմեղներու դէմ: Այս իմաստով ալ, թերեւս, ամերիկեան գործողութիւնները աւելի մօտ են ահաբեկչութեան ամերիկեան հասկացողութեան, քան՝ այդ զինուորական գործողութիւնները, որոնք կը կատարուէին դիմադրութեան կողմէ՝ վերջին տասնամեակներուն:

Ուաշինկթոնի վարչամեքենային հետ երկխօսութիւնը երբեք չէ եղած սխալի, ճիշդի, յստակութեան եւ առարկայականութեան ընդհանուր հասկացողութիւններուն շուրջ: Այս վարչամեքենան միշտ ալ ինքզինքին թոյլ կու տայ առանձին ճշգրիտ չափանիշներ: Նոյնիսկ երբ իրեն կը պարտադրուի քրէ մը բանակցիլ, ինչպէս է ներկայ իրավիճակը, Միացեալ Նահանգներ մասնակիօրէն կը զիջին արտակարգ դաշինքներուն առջեւ եւ իրենց կը վերապահեն այն, ինչ որ կը կարծեն թէ իրենց իրաւունքն է. ամէն վնաս,

որ կը հասնի Միացեալ Նահանգներուն, վնաս մըն է ամբողջ մարդկութեան համար:

Պատճառ չկայ, ուրեմն, բանավէճը սահմանափակելու «սահմանում»ի հասկացողութեան մէջ: Այլ նաեւ կարելի է ըսել, որ մենք նոյնիսկ բանավիճելու կացութեան մէջ չենք: Ներկայ կացութիւնը տազնապի կացութիւն մըն է, որուն մէջ բառերուն եւ անոնց իմաստներուն տեղ չկայ, բացի եթէ անոնք կարողութիւնը ունին ծառայելու այնպիսի նպատակներու, որոնց մէջ չկայ «հասարակաց լեզուի» մը հասնիլը: «Հասարակաց լեզուի» մը հասնիլը ամերիկեան մտահոգութիւն չէ: Ուաշինկթոն կ'ուզէ քաղաքական հասկացողութիւններուն հետ վերաբերիլ այնպէս, ինչպէս կը վերաբերի այն ցանկերուն հետ, որոնք ամէն վայրկեան բարեփոխուելու հաւանականութեան ենթակայ են:

Եւ որովհետեւ կացութիւնը տազնապի կացութիւն է, Միացեալ Նահանգներու ազատականները կը կրեն այն, ինչ որ կը գրեն: Կոչ կ'ուղղեն հասարակական կարծիքը սիրաշահիլ՝ արարական եւ իսլամական աշխարհներուն մէջ: Հասարակական կարծիքի այս սիրաշահումը՝ նախ կը սկսի շղթայազերծելով պատերազմը եւ շահելով զայն: Երկրորդ՝ պարտադրելով ուրիշներուն, որ փոփոխութեան ենթարկեն իրենց բառամթերքը: Եւ երրորդ, իրենց պահանջներուն թափփոխքները նկատի առնելով: Այս կը նշանակէ, գործնական գետնի վրայ «գորաշարժի» ենթարկել հասարակական կարծիքը, անոր պարտադրելու համար ընդունիլ պատերազմի տեւողութիւնը եւ անոր ահաւոր հետեւանքները:

Հասարակական կարծիքը «սիրաշահելու» այս դասը կրնայ ներշնչել բազմաթիւ արարներ: Եւ իրենց պարտականութիւնն է յիշել, որ այս գիւտին մէջ կան մարդիկ, որոնք առաջ անցած են Միացեալ Նահանգներու ազատականներէն եւ պահպանողականներէն: Անոնց շարքին է «Հըզպալլա»ն, որ շահեցաւ իսրայէլեան հասարակական կարծիքը, եւ զայն մղեց որդեգրելու Լիբանանէն առանց նախապայմանի հեռանալու պահանջը:

ԺՈՁԷՅ ՍԱՄԱՀԱ

«Սաֆիր»

ՅԵՂԱՅԻՆ ԽՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎԱԽԸ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԷՆ ԼԻԲԱՆԱՆ ՎԵՐԱԴԱՐՁՈՒՅԱԾ Է ԱՐԱՐ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԻՒՆԸ

Երբ 11 Սեպտեմբերի յարձակումներէն ետք զայրացած ամբոխ մը պէսյպոլի գաւազաններով յարձակեցաւ Ամր Բընասնի վրայ, երիտասարդ սէուտցին անդրադարձաւ, որ Միացեալ Նահանգներէն հեռանալու ժամանակն էր: Բընասն, որ Ֆլորիտայի մէջ ելեկտրական ճարտարագիտութիւն կ'ուսանէր, ուղղուեցաւ դէպի Լիբանան, ուր կը յուսայ խաղաղօրէն շարունակել իր ուսումը: Ան ներկայիս կ'ուսանի Պէյրութի Ամերիկեան համալսարանին մէջ:

Յիշելով իր վրայ կատարուած յարձակումները, Ա. Բընասն ըսաւ. «Անոնք պէսյպոլի գաւազաններով ծեծեցին զիս՝ ըսելով, որ այս մէկը Ուաշինկթոնի համար է, այս մէկը՝ Նիւ Եորքի, այս մէկը՝ Պըն Լատէնի»:

Բընասնի փորձառութիւնը կը ցոլացնէ Միացեալ Նահանգներու տարածքին ուսանող արաբ եւ իսլամ ուսանողներուն վախը: Ուսամա Պըն Լատէնը 11 Սեպտեմբերի յարձակումներուն ետին կանգնող գլխաւոր կասկածելի յայտարարուելէ ետք անոնցմէ շատեր ենթարկուած են բիրտ վերաբերման:

Այս կացութեան լոյսին տակ վարչապետ Ռաֆիք Հարիրի Պէյրութի համալսարաններուն յանձնարարած է նախապատրաստուիլ Միացեալ Նահանգներէն վերադարձող արաբ ուսանողներու հոսքի մը: Բաղաջցիական պատերազմին պատճառով երկրին մասին խառնաշփոթ տպաւորութիւնը բարելաւելու համար Հարիրի առաջարկած է երկիրը դրախտ դարձընել ուսանողներուն համար, որոնց մեծամասնութիւնը կու գայ քարիւղով հարուստ Արաբական ծոցի երկիրներէն: Անոնց ներկայութիւնը կրնայ մեծապէս նպաստել երկրին տկար տնտեսութեան:

Ըստ Պէյրութի Ամերիկեան համալսարանի պաշտօնատարներուն, վերջին շրջանին քանի մը տասնեակ ուսանողներ, մեծամասնութեամբ Լիբանանէն եւ Մոցի երկիրներէն, Միացեալ Նահանգներու համալսարաններէն փոխադրուած են Պէյրութի ամերիկեան համալսարան: Այս երեւոյթը արթնցուցած է այն յոյսը, որ Լիբանան կրնայ վերստին խաղալ շրջանին մէջ ուսման մայրաքաղաքի իր դերը եւ Մոցի ուսանողներուն եւ հարստութեան համար ըլլալ մագնիս մը:

Միացեալ Նահանգներէն Լիբանան փոխադրուած ալ սէուտցի ուսանող մը, որ ներկայիս կ'ուսանի Լիբանանեան Ամերիկեան համալսարան, ըսած է. «Արաբներուն համար կացութիւնը աւելի եւ աւելի վատթարացաւ: Մինչեւ վերջ չէինք կրնար պահուում մնալ, հետեւաբար Լիբանան եկանք»:

Կրթական մարզի պատասխանատուներուն համար Լիբանան բնական ուղղութիւնն է Մոցի արաբներուն, որոնք 1975 - 1990ի պատերազմէն առաջ սեռուղները շարունակ հոս ուսած են: «Ուսանողները կու գան հարուստ ընտանիքներէ», ըսաւ Պէյրութի համալսարաններէն մէկուն պաշտօնատարներէն մէկը: «Եթէ անոնք Միացեալ Նահանգներու փոխադն

հոս ուսանին, անոնց ծնողները ամրան արձակուրդը հոս կ'անցընեն»:

«Նոյնիսկ եթէ Աֆղանիստանի պատերազմը այսօր վերջ գտնէ եւ ամէն ինչ իր բնականոն ընթացքը վերագտնէ, Միացեալ Նահանգներ պիտի չվերադառնամ», ըսաւ Միացեալ Նահանգներէն Պէյրութի համալսարաններէն մէկը փոխադրուած քուէյթցի ուսանող մը: «Լիբանանի մէջ կրնամ ամերիկեան ուսում ստանալ եւ ծնողներուս աւելի մօտ պիտի ըլլամ: Ի՞նչու պիտի վերադառնամ Միացեալ Նահանգներ»:

Յապաւուած՝ ԼԻՆ ՆՈՒԵՅՃԵՏ

«Տը Տէյլի Սթար»

ՇԱԳԻՏԱԿԱՆ

ՇՀԻՄԻ ՄԷՋ ՅԱՅՏՆԱԲԵՐՈՒԵՑԱՆ ԵՐԿՈՒ ԳԵՐԵՉՄԱՆՆԵՐ

Վերջերս ՇՀԻՄի շրջանին մէջ կատարուած շինարարական աշխատանքներուն ընթացքին յայտնաբերուած են երկու գերեզմաններ եւ ոսկորներու մնացորդներ: Տօքթ. Համատ Աուալտաթի աշխատանքները կը կատարուէին ՇՀԻՄի հոռմէական հնագիտական պալատին մօտերը:

Աշխատեսները «Սաֆիր» օրաթերթին ըսին, թէ տան հիմքէն 50 սմ. փորելէ ետք, ի յայտ եկած են երկու բացուածքներ եւ հողը սկսած է աւելի փխրուն դառնալ ու խոռոչներուն մէջ թափիլ: Փնտռուեցներէ ետք պարզուած է, թէ հոն կը գտնուին ոսկորներու եւ գանկերու մնացորդներ:

Այդ բացուածքները ժայռերով գոցուեցան եւ նկարուեցան շինարարական աշխատանքներու տիրոջ եւ ՇՀԻՄի ոստիկանութեան ներկայութեամբ: Այս վերջինները ժամը ժամուն կը հետեւէին իրադարձութիւններուն եւ մնայուն կերպով ներկայ էին վայրին մէջ:

Աշխատանքներու պատասխանատուն՝ Ռինաթա Թարազի «Սաֆիր»ի լրագրողին ըսած է, թէ յայտնաբերուածները երկու մեծ գերեզմաններ են, եւ աւելցուցած է, թէ անոնք շրջանին մէջ իւրայատուկ են եւ պիտի օժանդակեն շրջանին եւ յատկապէս ՇՀԻՄի պատմական ուսումնասիրութեան: Կ'ենթադրուի, թէ կամաքներուն մնացորդները կը վերաբերին բիւզանդական կամ հռոմէական ժամանակաշրջաններուն:

Ռինաթա Թարազի վստահեցուցած է, թէ յայտնաբերուածները կապ կրնան ունենալ ՇՀԻՄի հին պալատին գտնուած վայրին հետ, որովհետեւ պալատին

Մ է Կ ու -

կէս տարի անցած է իսրայէլեան ուժերու Շքիֆի բերդէն քաշուելուն եւ տակաւին հարիւրաւոր օտար զօսաշրջիկներ եւ լիբանանցիներ զանազան շրջաններէ կ'այցելեն եւ կը շրջագային բերդին մէջ: 25 տարի տեւած իսրայէլեան բռնազրուումներուն պատճառով բերդը վերածուած է կիսակործան եւ քայքայուած կառոյցի մէջ, եւ անոր հնութիւններէն ոմանք կորսուած են: Անիկա այսօր տակաւին կը մնայ իր վիճակին մէջ, սակայն հակառակ այս իրողութեան, այցելուներուն թիւը հետզհետէ կ'աւելնայ. անոնք հոն կ'երթան բերդին կառուցուածքին, հնութիւններուն, պատմական կոթողներուն ծանօթանալու համար:

Շքիֆի պատմական հնագիտական բերդը տակաւին անհամբեր կը սպասէ պատասխանատուներու խոստումներուն իրագործման: Իսրայէլեան ուժերուն քայլէն ետք զանազան կողմերէ եւ մարմիններէ խոստումներ տրուեցան բերդը վերանորոգելու եւ վերանազնելու, սակայն այս խոստումները թուղթերու վրայ մնացին, եւ տակաւին բերդը կը մնայ լքելու եւ անխնամ վիճակի մէջ: Միակ որը նախաձեռնութիւնը կատարեց Նապաթիէի նահանգապետը՝ Մոհամմադ Մաուլան, որ ձեռնարկեց բերդին մաքրութեան եւ իսրայէլեան ուժերուն ձգած մնացորդներէն ձեռքազատելու եւ նախաձեռնեց իր անհատական հրաշքով: Կառուցուած է 1135 թուականին՝ իբրեւ պահակակէտ հարաւային անցքին, որ Սայտա-րակները, եւ կ'օգտագոր-



ծէին ներքին հին ճամբաները, որոնք այսօր կը գտնուին գէշ վիճակի մէջ: Նահանգապետը անցեալ տարի խոստաւած էր հրապարակը վերածել բեմի մը՝ օժտուած ձայնի եւ լոյսի սարքաւորումներով, մարմնաւորելու համար Իսրայէլի դէմ տարուած պայքարը: Ինչպէս նաեւ խոստացւած էր բերդը օժտել լեկտուրականութեամբ, լուսաւորման յատուկ սարքերով, վերականգնել անոր հնութիւնները, արտաքին տեսքը, վերանորոգել քայքայուած եւ քանդուած մասերը եւ բերդը վերածել պատմական, հնագիտական ներկայատուներու խոստումներուն: Իսրայէլի կոթողի մը: Այս ծրագիրները պիտի իրականանային նախագահ Լահուտի հովանաւորութեամբ եւ զանազան նախարարութիւններու եւ քաղաքապետարաններու գործակցութեամբ եւ աջակցութեամբ, սակայն խոստումները մնացին միայն «խոստում»:

Շքիֆի բերդը կը նկատուի ամէնէն հիանալի բերդերէն, որ կառուցուած է խաչակիրներուն կողմէ՝ Երուսաղէմի Յուդէական թագաւորի օրէն: Անիկա կը գտնուի ժայռոտ ձորի մը եզրերը, Լիթանի գետէն 2 քիլոմէթրէն ձեռքազատելու վրայ: Կառուցուած է 1135 թուականին՝ իբրեւ պահակակէտ հարաւային անցքին, որ Սայտա-րակները, եւ կ'օգտագոր-

կը միացնէ Պեքաային եւ Դամասկոսին: Արաբ ճանապարհորդները անոր տուած են Շքիֆ Առնուն անունը, իր ստորոտին գտնուող Առնուն գիւղին պատճառով: Ֆախրէտտին իշխանը իր օրերուն վերանորոգած է այս բերդը եւ օգտագործած է թուրքերուն դէմ մղած պատերազմներուն ընթացքին:

Պատումները զանազան են բերդին կառուցման թուականին մասին: Շատեր կ'ըսեն, թէ անիկա կառուցուած է 1135 թուականէն առաջ, իսկ ուրիշներ կը կարծեն, թէ անոր կառուցման թուականը խաչակիրներու արշաւանքէն շատ առաջ ըլլալու է:

Պատմութեան ընթացքին Շքիֆի բերդը վերանորոգուած եւ ընդարձակուած է քանի մը անգամ եւ անիկա լաւապէս պահպանուած է մինչեւ իսրայէլեան վերջին բռնարարները: Անիկա կը գտնուի Նապաթիէի հարաւը՝ 8 քիլոմէթր հեռավորութեան վրայ:

Մինչեւ 70ական թուականներուն կէսերը, Շքիֆի բերդը կը համարուէր յատկանշական հնագիտական կենդանի: Երբեք անոր մեծ թիւով այցելուներ եւ զօսաշրջիկներ, որոնք շրջան կ'այցելէին բերդը տեսնելու համար: 1982ին անիկա Իսրայէլի վարչապետ Մենահիմ Պեկինի կողմէ նուիրուեցաւ իսրայէլեան գործակալ Սատա Հատտաթի՝ անոր կատարած ծառայութիւններուն իբրեւ գնահատանք: Այդ թուականէն մինչեւ իսրայէլեան ուժերու քաշուելու անիկա եղաւ իսրայէլեան ուժերու ռազմական կարեւորագոյն կեդրոններէն մէկը, մինչ անոր արեւմտեան ստորոտը 70ական թուականներու սկիզբէն մինչեւ կէսերը եղած է լիբանանեան ուժերու կենդանի: Այդ պատճառով բերդը այդ շրջանին թիրախ դարձաւ իսրայէլեան օդային ուժերու կողմէն: 1975էն 1982 անիկա կեդրոն էր «Լիբանանի արաբական բանակ»ին, «Լիբանանեան ազգային շարժում»ի եւ պաղեստինեան կազմակերպութիւններուն, եւ այդ շրջանին եւս ան բուռն ուժրակոծուի ենթակայ դարձած է:


Այս բոլոր յարձակումներէն եւ պատմական իրադարձութիւններէն վերապրած այս բերդին մնացորդներն են, որ կանգուն են այսօր:

ԱՏՆԱՆ ԹԱՊԱԺԱ

«ՍԱՖԻՐ»

ԾԱՆՈՒՑՈՂՆԵՐՈՒ ՌԵԴԱԴՐՈՒԹԵԱՆ

«Ազդակ»ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթերցի գիրով (հաստատութեանց պարագային՝ մախրնութաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատուած) ներկայացնել «Ազդակ»ի ծանուցումներու գրասենյակը:



ՄԵՐ ԶԱՒԱԿՆԵՐԸ ԵՒ ՄԵՆՔ

ՄԻԱՅՆ ՏԱՊԿՈՒԱԾ ԳԵՏՆԱԽՆՁՈՐ ԿԸ ՍԻՐԻ...



Մինչեւ 2 տարեկան երեխան կերակրելը բաւական դիւրին է, սակայն 4 - 7 տարեկանին կացութիւնը կը փոխուի, անոնց սիրած ուտելիքները շատ սահմանափակ կ'ըլլան: Այսպէս, փոքրիկներուն նախասիրութիւնը կ'երթայ քաղցր ուտելիքներուն եւ ... գետնախնձորին, հացին ու դդմածին:

Ուսումնասիրութիւններ հաստատած են, որ երեխաները առաւելաբար կ'ընտրեն կուշտ պահող ուտելիքները եւ կ'անտեսեն բանջարեղէնները:

Ողբերգութիւն մը չէ, եթէ երեխայ մը գետնախնձորով եւ դդմածով կը սնանի, կարելի է օգնել անոր, որպէսզի չըջանցէ այս հանգրուանը եւ կամաց-կամաց ալլազան դարձնէ իր ուտելիքը:

ԻՆՉՊԷՍ ՕԳՆԵԼ ՓՈՔՐԻԿԻՆ

- * Երեխան շուկայ տանիլ եւ գնումի պահուն անոր ծանօթացնել զանազան տեսակի բանջարեղէնները, ան կամաց-կամաց թող ընտելանայ անոնց հետ:
- * Երեխան թող մասնակից դառնայ ճաշի պատրաստութեան եւ թող համտեսէ իր «ձեռքին դործը», եւ ոչ թէ՛ մօրը կողմէ պարտադրուած ուտելիքը:
- * Ուտելիքներ ներկայացնել ախորժաբեր ձեւով:
- * Նոր կերակուր մը առաջարկելու պարագային շատ քիչ քանակութեամբ հրամցնել՝ փոքրիկը չխրտչեցնելու համար:
- * Երեքը չպատժել նոր ուտելիք մը մերժող երեխան:
- * Առանց յուսահատելու, պարբերաբար փոքրիկին առաջարկել տակաւին շարաթ մը առաջ մերժած մէկ կերակուրը: Զգարմանալ, եթէ օրին մէկը հաճելի անակնկալի առջեւ գտնուին ոչ բոլոր, բայց կարգ մը բախտաւոր մայրեր....:

ՀԱՐՑԱԶՈՐՅՑ

ՎԱՐԴՈՒՀԻ ՎԱՐԴԱՆԵԱՆ

Բազմաթիւ մրցանակներ շահած հայրենի երգչուհի Վարդուհի Վարդանեան արգէն իսկ լայն ժողովրդականութիւն վայելող արուեստագիտուհի է: Հապիրճ ձեւով ծանօթանալով անոր նախասիրութիւններուն:

Ամեցասիրելի՝

- Քաղաքը - Երեւան
- Գոյնը - ճերմակ
- Ծաղիկը - Դաշտային ծաղիկներ
- Դերասանը - Զէք Նիքելսըն
- Դերասանուհին - Սոֆիա Լորէն
- Երգիչը - Մայքըլ Ժէյքսըն
- Երգչուհին - Էլլա Ֆիցճերլտ
- Խմիչքը - Նարինջի հիւթ
- Կերակուրը - Տապակուած գետնախնձոր
- Տարուան եղանակը - Աշուն
- Գիրքը - Կի Տը Սոփասանի «Ֆրանսացի պուրժուայի կիրակնօրեայ գրօսանքները»
- Գրագէտ - Շիրազ, Պուշկին
- Երաժշտութիւն - Բոլոր տեսակի
- Յօրինող - Կոմիտաս
- Մարզաձեւ - Սառնոցի վրայ գեղապար
- Ձեւագէտը - Փիեռ Քարտէն

www.lemagan.com

«ԱԶԳԱԿ»Ի ՄԷՋ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման թուականէն առնուազն օր մը առաջ, Մինչեւ երեկոյ 18:00-ը: Մահազ կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

ԿՐՈՑԱԿԱՆ

2001-2002 ԱՇՈՒՆ-ՉՄԵՌ ՆՈՐԱՉԵՒՈՒԹԵԱՆ ՅԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ



ԱՌՆԱԿԱՆ ՈՃԸ.- Յառաջիկայ եղանակին յաճախ պիտի հանդիպինք տարատ-բանկոններու, քասքեյներու, փողկապ-ներու եւ ժիլէներու: ՊԼՈՒՋՈՆԸ.- Կաշի թէ թաւիչ պլուզոնները շատ նորոյթ են այս ձմեռ: ԶԻՆ ՈՒՈՐԱԿԱՆ ՈՃԸ.- Զինուորական տարազներու կտորները, բայց նաեւ՝ ուսնոցներ, կալոններ, քոյ միլիթեր



տեսք տալու համար մարմինն: ԿԱՐՃ ՓԷՇԵՐԸ.- Կրկին եւ մեծ թափով վերադարձած են կարճ փէշերը: Կարճ ըսելով՝ ծունկէն վեր չհասկնանք, այլ՝ շատ կարճ... ՔԱՓԵՐԸ.- Այս տարի վերարկուները փոխարինուած են քափերով: Անոնք առհասարակ բա-



ստիքները եւ գինուորական դօտիներ դարձեալ հրապարակ պիտի իջնեն: ՏԱՐԱՍՆԵՐԸ.- Յառաջիկայ եղանակի տա-բարները լայն չեն, այլ՝ փակած, աւելի սլացիկ



ւակն լայն եւ երկար են: ԳԼԽԱՐԿՆԵՐԸ.- Նորոյթ են բոլոր տեսակի գլխարկները՝ կարպետէ, բուրդէ, կտորէ թէ մուշ-տակէ: ՄՈՒՇՏԱԿԸ.- Յառա-ր, փողկապները, նամա-կարաշիւի պայուսակնե-րը, գամբերով զարդար-ւած գօտիները տեւա-րար պիտի ընկերակցին ցերեկային հագուստնե-րուն: ՔՈՒԱՆՆԵՐԸ.- Յան-ցէ կամ այլ հիւսուածք-ներէ պատրաստուած քոլաքները աչքի պիտի գարնեն առաւելաբար մինի ժիլփերուն հետ...

Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ԽԱՉՔԱՐԻ ԵՒ ԱՂԲԻՐԻ ԲԱՅՈՒՄ

Կիրակի, 11 Նոյեմբեր 2001ին, յաւարտ Ս. պատարագի, տեղի պիտի ունենայ Ս. Նշան Սայր եկեղեցւոյ զաւիթին մէջ զետեղուած խաչքարի եւ աղբիւրի բացումը:

Սոյն առիթին պիտի նախագահէ՝
ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ. ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ
(Առաջնորդ Լիբանանի Հայոց Թեմին)

Սիրով կը հրաւիրենք մեր սիրելի հաւատացեալ ժողովուրդը ներկայ ըլլալու բացման այս առիթին:

ԹԱՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ

«ԱԶԳԱԿ»Ի ՀԵՌԱՉԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ

«ԱԶԳԱԿ»ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:

ARA TRAVEL IATA ԱՆԴԱՍ

ARMENIAN AIRLINESԻ SALES AGENT,

ՈՒՐԱԽՈՒԹԵԱՄԲ ԿԸ ՅԱՅՏԵ ԻՐ ՅԱՐԳՈՅ ՅԱՃԱԽՈՐԴՆԵՐՈՒՆ, ՈՐ Կ'ԱՊԱՇՏՈՒ

ՊԷՅՐՈՒԹ - ԵՐԵՒԱՆ - ՊԷՅՐՈՒԹ, ՀԱԼԷՊ - ԵՐԵՒԱՆ - ՀԱԼԷՊ
ԵՒ ԵՐՈՊԱԿԱՆ ԲՈԼՈՐ ԲԱՂԱՔՆԵՐԸ
ARMENIAN AIRLINES ՕԴԱՆԱԽԵՐՈՎ:

● օդանաւային տոմսեր ● ապրանքի փոխադրութիւն

ԱՐԱ ԹՐԱՎԵԼ,
Պուրճ Համուտ, ճամկատան շէք,
Հեռ. 266594 - 261296 : FAX: 261296



ՄՈՅԿԵՐԸ.- Կան ցած կամ մինչեւ ծունկ հաս-նող մոյկեր, որոնք յա-ճախ օժտուած են բարակ եւ բարձր կրունկներով: ԷՔՈՍԻՆ ԾԱԼԵՐԸ.- Յառաջիկայ ձմեռ, քա-վերուն նման շատ նո-



րոյթ են նաեւ երոսէ շա-լերը, որոնք թէ՛ պիտի տաքցնեն եւ թէ՛ վայելչու-թիւն պիտի տան զայն կրողին:

ՇԱՐԹՈՒԱՆ ՄՏԱԾՈՒՄԸ

ԽՕՍՔԸ ԱՄԵՆԱԶՕՐ

Խօսքը ինքը՝ մարդն է, ունի անոր վարքա-գիծն ու կարողութիւնները, հմայքն ու հրաշա-գործ ուժը, դրակն ու բացասական իմաստով: Խօսքը կրնայ ըլլալ նենգ ու ամոքող, քծնող ու առնական, մեղրածորան բայց թունոտ, դառնահամ բայց կազդուրիչ:

Խոհեմ, բարի եւ առաքինի մարդուն խօսքը կրնայ արարել կեանք ու բարիք, իսկ խարդախ, զրպարտող չարակամ մարդու խօսքը՝ չարիք ու մահ:

Խօսքը կը դառնայ գաղափար, գաղափարը՝ համոզում ու դաւանանք, ապա՝ անկոտորում կամք եւ ուժ, որոնցմով լեռներ կարելի է տա-պալել: Խօսքն է, որ կը պատրաստէ ու կը թրծէ սերունդներ, կը մղէ զանոնք մեծ սխարնքնե-րու եւ զոհաբերութեանց:

Խօսքը օժտուած է լաւ ու վատ կարելիու-թիւններով: Ինչ ալ ըլլան մարդուն պայման-ները, կեանքի դառնութիւնները աւելի շատ են, հետեւաբար մարդ միշտ ալ պէտք ունի բա-րի, քաջալերական, յուսադրող, ամոքիչ ու բարեացակամ խօսքերու:

Իսկ այդ ամէնը իմ եւ քու լեզուիդ ծայրն է, որքա՛ն կ'ուզեմ ըսել քեզի ու քեզմէ լսել այդ-պիսի լաւ ու բարի խօսքեր:

ԲՈՅՍԵՐՈՒ ԱՃԽԱՐԷՆ

ՊԱՆԱՆԻ ՏՈՒՆԿԸ

Պանանի տունկը մեծ խնամքի չկարօտող բոյս մըն է: Կը գտնենք զանազան չափի եւ գոյնի պանանի տուն-կեր: Տան մէջ պահելու պարագային՝ հրաժա-րիլ մեծ չափերէն, քա-նի որ անկա շուտ աճող եւ մեծցող է:

Նոյնիսկ եթէ պտուղ չտայ, պանանի տունկը իր գեղեցիկ տեսքով կը լեցնէ տան մէկ ան-կիւնը եւ կը ճոխացնէ սենեակը:

Առողջ աճելու հա-մար այս բոյսը պէտք ունի լոյսի եւ ջրի: Զայն պէտք է ջրել շարաթը եր-կու անգամ, նաեւ պէտք է գովացնել անոր լայն տե-րեւները՝ դարձեալ ջուր սրսկելով:

Պանանի տունկը պարարտացուցիչի պէտք ունի 8էն 10 օրը անգամ մը:

Ամբողջ ամառը պանանի տունկը կ'ախորժի պատշ-գամի արեւէն, բայց հեռու՝ հովի հոսանքէն, որ կը վնասէ տերեւներուն:



ԽՈՇԱԳԻՐ

ՓԱՐՄԸԶԱՆ ՊԱՆԻՐՈՎ ՍՄԲՈՒԿ

4 անգի համար անհրաժեշտ են.-

- 12 պզտիկ սմբուկ
- 1 կիւրտն
- 1 լոլիկ
- Ծոթիկն
- 2 պճեղ սխտոր
- 50 կրամ փարմըզան պանիր
- 8 սանթիլիթր ձիթաիւղ
- Սուրճի կէս դգալ քիմիոն
- Աղ, սեւ պղպեղ
- Պատրաստութիւն.-
- Փուռը տաքցնել 180 ջերմաստիճան:
- Փայրէքս ամանին յատակը ձէթ քսել:

Սմբուկները լուալ, ցամքեցնել եւ առանց կոթերը կտրելու երկայնքին երկուքի կիսել, ապա կրկին դէմ դիմաց շարել եւ ալիւմինիոմ թուղթով փաթթել: Փուռ-ուին մէջ եփել շուրջ 20 վայրկեան, ապա ալիւմինիոմ թուղթէն հանել:

Դիպիլի մը օգնութեամբ սմբուկներուն միջուկները պարպել եւ դնել ամանի մը մէջ, աւելցնել ճգմուած սխտորը, քիմիոնը, ձիթապտուղն ու ձիթաիւղը եւ պա-տառաքաղով մը ճգմել, աղել, համեմել եւ ստացուած խառնուրդը լեցնել պարպուած սմբուկներուն մէջ:

Լոլիկը շատ մանր կտրտել եւ զարդարել սմբուկ-ներուն երեսը, աւելցնել փարմըզան պանիրի բարակ շերտեր եւ եփել փուռին մէջ՝ հազիւ 10 վայրկեան:

Հրամցնելու ժամանակ զարդարել թարմ ծոթիկներով:


Պատրաստեց
